«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Գյումրու օլիմպիական հերթափոխի մարզական պետական քոլեջը (այսուհետ՝ ԳՕՀՊՄՔ, ՄՈՒՀ կամ Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ): Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ....2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ....3

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ....4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....5

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....11

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....14

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....14

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....17

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....22

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....26

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....29

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....33

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....35

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....39

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....42

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....45

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....48

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....49

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....49

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....51

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....53

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....54

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....55

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....56

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջը հիմնադրվել է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում և շուրջ 38 տարի իրականացնում է հանրակրթական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Քոլեջն իր գործունեությամբ տարածաշրջանում խթանում է մարզական կրթության զարգացումը՝ լինելով Հայաստանի Հանրապետության մարզական կրթական հաստատություններից մեկը:

2024 թվականին Քոլեջը ներդրել է իր առաջին զարգացման ռազմավարական ծրագիրը՝ նպատակ ունենալով բարելավել կառավարման համակարգերը և ապահովել կրթության որակի բարձրացման ուղղությամբ կայուն առաջընթաց:

Քոլեջը գտնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Քոլեջը կարևոր դերակատարություն ունի Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական և մարզական զարգացման գործընթացում: Այն իրականացնում է «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ տրամադրելով մարզիչի որակավորում:

Ուսանողներ: 93 ուսանող ներգրավված է գործող ծրագրերում:

Դասախոսներ: Քոլեջն ունի ընդհանուր 26 դասախոս, որոնցից 13-ը հիմնական աշխատակիցներ են, 8-ը համատեղողներ, իսկ 5-ը՝ գործատուներ:

Շրջանավարտներ: Շրջանավարտների մեծ մասը զբաղվածություն է գտնում մարզային կրթական հաստատություններում և սպորտային կենտրոններում:

Մարզական ուղղվածություններ: Ծրագրերը ներառում են ծանրամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, դյուդո և բռնցքամարտ, որոնք համապատասխան են տարածաշրջանի պահանջներին:

Քոլեջի ռազմավարական նպատակը տարածաշրջանում սպորտային կրթության առաջատար կենտրոն դառնալն է՝ զուգակցելով կրթական և մարզական գերազանցությունը:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է՝ իր սահմանված առաքելությամբ:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԳՕՀՊՄՔ-ն, որպես միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, կարևոր նշանակություն ունի Շիրակի մարզի և ՀՀ-ի համար, ինչպես նաև, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում:

Քոլեջը մշակել է Ռազմավարական ծրագիր, որն արտացոլում է իր առաքելությունը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ հաստատությունը երկարաժամկետ պլանավորման փորձ է կատարել՝ ուշադրություն դարձնելով նաև ԳԱՑ-երի սահմանմանը: Սակայն պլանավորումն ունի անորոշություններ ժամանակացույցի, ռեսուրսների և արդյունքների առումով, ինչը սահմանափակում է ծրագրի նպատակների լիարժեք իրագործումը: Քոլեջը կարիք ունի ավելի խորը վերլուծությունների, որպեսզի ռազմավարական պլանավորումը լինի հստակ, օբյեկտիվ և արդյունավետ:

Քոլեջում առկա են կոլեգիալ և միանձնյա կառավարման համակարգեր, սակայն կառավարման խորհուրդը գերակշռորեն զբաղվում է օպերատիվ հարցերով՝ ռազմավարական որոշումները թողնելով երկրորդ պլանում: Դասախոսներն ու ուսանողները ներգրավված են կառավարման մարմիններում, սակայն պասիվություն են դրսևորում: Ֆինանսական մուտքերի բազմազանեցման և ռազմավարական ֆինանսական պլանավորման բացակայությունը խոչընդոտում է զարգացման հնարավորություններին: Չնայած հատկանշական է քոլեջում համագործակցային մշակույթն ու նվիրյալ աշխատանքը, սակայն դեռևս թերի են նաև կարճաժամկետ պլանավորման և գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներն ու գործիքակազմերը: Ներդրված չէ որակի կառավարման հիմնական սկզբունքը (ՊԻԳԲ) բոլոր գործընթացներում, սակայն դրական է, որ քոլեջի հիմնական գործընթացը՝ կապված մարզիչների գործունեության հետ, ըստ այդ սկզբունքի է իրականացվում: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը դեռևս անելիքներ ունի տվյալների հավաքագրման հստակ մեխանիզմներ, ինչպես նաև կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին հրապարակումներ ու դրանք գնահատող մեխանիզմներ ապահովելու, ինչպես նաև կառավարչական որոշումների թափանցիկությունն ապահովելու հարցերում:

Քոլեջը սկսել է որակի ապահովման համակարգի ձևավորումը՝ մշակելով որոշակի փաստաթղթեր, սակայն գործընթացը դեռևս իր առաջնային փուլում է: Հարցումների միջոցով տվյալների հավաքագրումը կարևոր առաջին քայլ է, բայց վերլուծություններն ու դրանց ազդեցությունը գործունեության վրա դեռևս սահմանափակ են: Տվյալների կառավարման միասնական համակարգի և որակի ապահովման մշակույթի ձևավորման կարիք զգալի է:

Վերոնշյալի արդյունքում փորձագիտական խումբը եզրակացնում է, որ չնայած քոլեջը ՌԾ է մշակել ու ներդրել և փորձում է աշխատանքներ իրականացնել որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ, նաև առկա է տարիների հենքով ձևավորված լավ

մշակույթ մարզիչների գործունեության, համագործակցային վարչարարական գործընթացների առումով, սակայն դեռ հետազոտահենք կառավարման գործընթացները թերի են:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում քոլեջի ջանքերը՝ մասնագիտական կրթական ծրագրի արդյունավետության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես գործնական ժամերի ավելացման և ուսումնական ծրագրերի բարելավման ուղղությամբ: Դրական է գնահատվում ուսումնական գործընթացների պլանավորման փաստաթղթերի առկայությունը և պրակտիկայի կազմակերպման որոշակի բարեփոխումները, սակայն փաստաթղթային և գործընթացային միասնականության, ինչպես նաև մշտադիտարկման մեխանիզմներում բարելավման կարիք կա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներուժի զարգացման ուղղությամբ՝ ներառյալ սկսնակ դասախոսների աջակցությունը, դասախոսական կազմի մրցութային ընտրության կարգի մշակումը և վերապատրաստումների փորձի փոխանակումը: Այնուամենայնիվ, դասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման և երիտասարդ կադրերի ներգրավման մեխանիզմները դեռևս պահանջում են բարելավում, ինչպես նաև կարիք կա հետազոտական աշխատանքներում ներգրավման և կադրային ռեզերվի ձևավորման տեսանկյուններից:

Քոլեջը սահմանել է ռեսուրսների զարգացման ռազմավարական նպատակներ և արդյունավետորեն կիրառում է առկա ռեսուրսային բազան՝ ապահովելով ուսումնական և մարզչական գործընթացներ: Այնուամենայնիվ, ռեսուրսների արդիականացման, մասնագիտական գրականության համալրման, և ֆինանսական այլընտրանքային միջոցների ներգրավման ուղղությամբ լրացուցիչ քայլերի անհրաժեշտություն կա: Գործատուների հետ համագործակցության ընդլայնումը և էլեկտրոնային համակարգերի ներդրումը կնպաստեն գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Վերոնշյալը նկատի ունենալով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՕՀՊՄՔ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

ԳՕՀՊՄՔ-ն ապահովել է ուսանողների ընտրության, ընդունելության, և հավաքագրման արդյունավետ մեխանիզմներ, ինչը նպաստել է բարձր պատրաստվածությամբ ուսանողների ներգրավմանը: Խորհրդատվական ծառայությունները և կարիերայի կենտրոնի առկայությունը դրական ազդեցություն են ունենում ուսանողների ակադեմիական և մարզական առաջադիմության վրա: Այնուամենայնիվ, կարիերայի կենտրոնի գործունեության ընդլայնման և շրջանավարտների բազայի տեղեկատվական դառնալու անհրաժեշտություն կա, ինչպես նաև կարող է բարելավվել հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը:

Քոլեջը 2024-2029 թթ. ՌԾ-ով կարևորել է ուսանողների վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացումը՝ նախատեսելով դասախոսների և մարզիչների հետազոտական գործունեության ներգրավումը: Սակայն, այս ուղղությամբ գործողությունների հստակ պլաններ և գործընթացներ դեռևս չեն իրականացվել: Ուսումնական պլաններում հետազոտական բաղադրիչների ինտեգրումն ու պրակտիկայի լավ փորձի ընդլայնումը կարող են նպաստել համակարգային մոտեցման ձևավորմանը:

Քոլեջում ներդրվում է հաշվետվողականության համակարգ, սակայն այն դեռևս չունի հստակ կառուցվածք, իսկ տնօրենի հաշվետվությունները դեռևս ֆորմալ բնույթ են կրում:

Քոլեջն օգտագործում է տարբեր հարթակներ՝ իր գործունեության թափանցիկությունն ապահովելու համար, սակայն չունի պաշտոնական կայք և հասարակության հետ կապի արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Գնահատելի են հասարակության հետ իրականացվող մշակութային և մարզական միջոցառումները, որոնք նպաստում են սպորտի զարգացմանն ու հայրենասիրական դաստիարակությանը:

Քոլեջը ցուցաբերում է նախաձեռնողականություն գործընկեր կառույցների հետ համագործակցության հաստատման հարցում, սակայն այդ համագործակցությունները հիմնականում իրավական հենքով ամրագրված չեն: Միջազգայնացման ուղղությամբ առկա են պլաններ, մասնավորապես օտար լեզուների ուսուցման ու զարգացման ուղղությամբ, ինչը կնպաստի միջազգային գործընկերների շրջանակի ընդլայնմանը: Ռեսուրսային բազայի վերազինումը դիտարկվում է որպես միջազգայնացման գործընթացի կարևոր նախադրյալ, որը ներկայումս կենտրոնացած է մարզական ոլորտի վրա:

Ելնելով վերոնշյալից՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳՕՀՊՄՔ-ն բավականին ջանքեր է ներդնում և գործընթացներ իրականացնում հաստատության զարգացմանը միտված, սակայն այս ուղղությամբ նաև դեռևս անելիքներ կան:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Քոլեջի առաքելության մեջ պետության և հասարակության պահանջների արտացոլված լինելը:
2. Մարզիչների գործունեության մակարդակում ՊԻԳԲ շրջափուլի նախադեպի առկայությունը:
3. Գործնական կարողությունների և պրակտիկ հմտությունների ապահովման ուղղությամբ ուսումնական գործընթացի և միջավայրի առկայությունը:
4. Աշխատանքի վրա հենված ուսուցման մոտեցումների գործածումը պրակտիկայի գործընթացում:
5. Սկսնակ դասախոսներին աջակցելու մշակույթի առկայությունը:
6. Վերապատրաստումների արդյունքում ձեռք բերված փորձի փոխանակման մշակույթը:
7. Առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ուսումնական և պրակտիկ գործընթացներում:
8. Խորհրդատվական ծառայությունների արդյունավետ իրականացումը՝ ուսումնական գործընթացի աջակցման համար:
9. Կարիերայի կենտրոնի արդյունավետ գործունեությունը՝ ուղղված ուսանողների հետագա զարգացմանը:
10. Հասարակության հետ համագործակցության և մարզական հաջողությունները ներկայացնելու ուղղությամբ միջոցառումների արդյունավետ իրականացումը:
11. Մարզիկների՝ միջազգային հարթակներում ներկայացվածություն և տարածաշրջանային գիտելիքի փոխանցման ներուժը:
12. ԱՊՀ երկրների հետ արդյունավետ համագործակցություն սպորտի ոլորտում:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ՌԾ-ի նպատակների հասնելու համար ռեսուրսների և արդյունքների հստակ պլանավորման բացակայություն։
2. Տվյալների հավաքագրման մեխանիզմների հավաքագրման, վերլուծության մեխանիզմների թերի լինելը։
3. Ֆինանսական պլանավորման և ռեսուրսների բազմազանեցման բացակայությունը։
4. Որակի ապահովման գործիքակազմի հատվածականություն և ոչ լիարժեքություն։
5. Դասախոսական կազմի մասնագիտական զարգացման կարիքների վերհանման և համապատասխան վերապատրաստումների պակասը։
6. Ուսումնական պլաններում ուսանողների վերլուծական կարողությունների զարգացման բաղադրիչների անբավարարություն։
7. Հաշվետվողականության համակարգի ոչ վերլուծական լինելը։
8. Պաշտոնական կայքի բացակայություն և սոցիալական ցանցերում գործունեության թափանցիկության խնդիրները։
9. Գործընկեր կառույցների հետ համագործակցության պայմանագրերի բացակայությունը։
10. Հասարակության հետ կապի արդյունավետության գնահատման մեխանիզմների պակաս։
11. Դասախոսների և ուսանողների շրջանում օտար լեզուների իմացության ցածր մակարդակը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Դիտարկել քոլեջի առաքելությունն ընդլայնելու հնարավորությունը՝ ներառելով առողջ ապրելակերպի մշակույթի տարածումը՝ ուղղված տարածաշրջանում սոցիալական դերի ամրապնդմանը, հանրային առողջության խթանմանը, ինչպես նաև ֆինանսական մուտքերի բազմազանեցման հնարավորությունների ընդլայնմանը։
2. Ներդնել հստակ և չափելի ԳԱՑ-եր, որոնք կարտացոլեն ռազմավարական գործողությունների ընթացիկ արդյունքները։
3. Ներդնել ֆինանսական պլանավորման երկարաժամկետ համակարգ, որը կներառի ռեսուրսների կանխատեսում և ներգրավման ռազմավարություններ, որը կօգնի ավելի կայուն հիմքով պլանավորել ենթակառուցվածքների զարգացումը, ծրագրերի ֆինանսավորումը և մարդկային ռեսուրսների աջակցությունը։
4. Ակտիվացնել կառավարման խորհրդի ռազմավարական դերակատարությունը, ապահովելով ռազմավարական որոշումների ընդունման և արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդնում, ինչպես նաև խրախուսել դասախոսների և ուսանողների նախաձեռնողական ներգրավվածությունը կոլեգիալ մարմիններում։
5. Համակցել ՌԾ երկարաժամկետ նպատակները կարճաժամկետ պլանների հետ, սահմանելով հստակ գործողություններ, ֆինանսական բաշխում և չափելի վերջնարդյունքներ, որոնք կապահովեն ՌԾ-ի աստիճանական իրագործման վերահսկողություն։
6. Ստեղծել հաշվետվողականության աստիճանակարգված համակարգ բոլոր մակարդակներում, որտեղ տվյալների հավաքագրումը և վերլուծությունը հիմք

կդառնան ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման համար, իսկ հաշվետվությունները կունենան վերլուծական բաղադրիչ։

7. Կատարել ֆինանսական ռեսուրսների բազմազանեցում, ներգրավելով միջազգային ծրագրեր, դրամաշնորհներ և համագործակցություններ, ինչպես նաև մշակել բիզնես-պլան կամ համագործակցություն կիսանորոգ շենքի արդյունավետ օգտագործման համար։

Որակավորումների արժանահավատ շնորհում

8. Ապահովել ուսանողների վերլուծական, գրավոր և բանավոր հմտությունների զարգացումը՝ ներմուծելով վերլուծական առաջադրանքներ, թիմային քննարկումներ և ռեֆերատներ։
9. Մշակել և ներդնել ՄԿԾ-ների մշտադիտարկման կանոնակարգ, որը հնարավորություն կտա հավաքել և վերլուծել տվյալներ ուսումնական ծրագրերի ուժեղ և թույլ կողմերի մասին։
10. Ներդնել համեմատական վերլուծության մեթոդաբանություն, որն ապահովված կլինի տվյալների փաստաթղթավորմամբ և լավագույն փորձերի փոխանակմամբ։
11. Մշակել և ներդնել դասախոսների և մարզիչների վերապատրաստումների թիրախային ծրագիր, որը կապահովի մասնագիտական ոլորտի արդիական պահանջներին համապատասխանող հմտությունների և գիտելիքների շարունակական զարգացումը։
12. Ներդնել մեխանիզմներ դասախոսական կազմի կարիքների շարունկական գնահատուման և դրանց հիման վրա վերապատրաստումների պլանավորման և իրագործման համար։
13. Քայլեր ձեռնարկել ֆինանսական մուտքերի բազմազանեցմանն ու ֆինանսական մուտքերի ավելացմանն ուղղված՝ ապահովելով ռազմավարական նպատակների իրականացում, ըստ առաջնահերթությունների նյութատեխնիկական ռեսուրսների համալրում, արդիականացմում ու միջազգային չափանիշներին առավելագույն համապատասխանեցում։
14. Գործատուների հետ համագործակցության բովանդակային ընդլայնմամբ ապահովել նրանց ներգրավվածությունը կրթական գործընթացներում՝ նպաստելով նաև համապատասխան ռեսուրսների կիրառմանը, այլ փորձի ուսումնասիրմանը և արտաքին գնահատման գործընթաց ապահովելուն։

Երկարաժամկետ զարգացում

15. Մշակել և ներդնել ուսանողների և շրջանավարտների կարիքների վերհանման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր՝ տվյալների հավաքագրման, վերլուծության և արդյունքների կիրառմամբ։
16. Մշտապես վերանայել և թարմացնել շրջանավարտների բազան՝ ուսումնասիրելով նրանց կարիերայի երկարաժամկետ հետագիծը՝ ապահովելու շրջանավարտների զբաղվածության առավել ամբողջական և իրական տվյալներ։
17. Ակտիվացնել և համակարգել ՈւԽ աշխատանքները՝ նպաստելով ուսանողների առավել լայն շրջանակի մասնակցությունը ՈւԽ աշխատանքներին։

18. Ներդնել հետազոտության ուղղությամբ ռազմավարական նպատակների իրականացման հստակ կարժաժամկետ պլաններ՝ ուղղված նպատակների իրագործման երաշխիքների ստեղծմանը:
19. Ներդնել հետազոտական և վերլուծական աշխատանքների իրականացման բաղադրիչներ (համապատասխան հանձնարարականներ, ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ և/կամ այլ)՝ ըստ մասնագիտական մոդուլների՝ սահմանելով համապատասխան հստակ պահանջներ:
20. Ապահովել դասախոսների, մարզիչների և ուսանողների ներգրավվածությունը հետազոտական գործունեությանը՝ նաև ներդնելով այդ ուղղությամբ խրախուսման և խթանման մեխանիզմներ:
21. Ներդնել հաշվետվողականության հստակ աստիճանակարգված համակարգ և բարելավել հաշվետվությունները՝ ապահովելով համակողմանի տվյալների և վերլուծական բաղադրիչներ:
22. Վերլուծել քոլեջի հնարավորությունները և աշխատաշուկայի կարիքները՝ կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու նպատակով:
23. Մշակել և ներդնել միջազգային համագործակցության զարգացման համակարգված քաղաքականություն, խրախուսման և խթանման մեխանիզմներ:
24. Ներդնել մեխանիզմներ դասախոսների՝ այդ թվում մարզիչների և մարզիկների օտար լեզուների բարելավման ուղղությամբ:
25. Ընդլայնել համագործակցության շրջանակները և ապահովել համագործակցությունների ինստիտուցիոնալ հիմքեր՝ շարունակականության երաշխիքների աստեղծանն ուղղված:
26. Գործուն քայլեր ձեռնարկել միջազգային և ազգային դրամաշնորհային ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ՝ նպաստելով քոլեջի ռազմավարական նպատակների իրականացմանը:
27. Համալրել որակի պատասխանատուի հաստիքը, հստակեցնել նրա լիազորությունները և ապահովել անհրաժեշտ ռեսուրսներ, ինչպես նաև ապահովել անհրաժեշտ կարողությունների զարգացման հնարավորություններ:
28. Բազմազանացնել տվյալների հավաքագրման մեխանիզմները՝ դիտարկելու քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավումը:
29. Ապահովել ոչ միայն ուսանողների, այլև արտաքին շահակիցների (գործատուներ, շրջանավարտներ) մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին՝ ուղղված ստացվող տեղեկատվության առավել բազմակողմանի ու վերլուծական լինելուն:



Փորձագիտական խմբի ղեկավար
Արմենուհի Սարգսյան

07.02.2025

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Արմենուհի Սարգսյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Էլեն Դավթյան**, Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի ուսումնական գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Արաքս Աղաջանյան,** Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի կրթության որակի պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ,
4. **Ինգա Հարությունյան,** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ, ուսանող փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավար **Վարդուհի Գյուլազյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 1-ը փետրվարի 2024թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է 23-ը սեպտեմբերի 2024թ.:

Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

21-ը նոյեմբերի 2024թ. առցանց հանդիպում է տեղի ունեցել Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել դեկտեմբերի 4-6-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսների դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել կողմից ներկայացված կրթական ծրագրի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 29-ը հունվարի 2025թ.:

Քոլեջի կողմից նախնական զեկույցի վերաբերյալ դիտարկումներ չեն ներկայացվել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 07.02.2025թ. և տրամադրվել քոլեջին:



Համակարգող
Վարդուհի Գյուլազյան
07.02.2025

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությունը ձևակերպված է 2024-2029 թվականների Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ): Քոլեջի առաքելությունն է՝ «ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական կրթական չափորոշիչներին համապատասխան որակյալ կրթության և մարզումների միջոցով նպաստել ազգային ու համամարդկային ժամանակակից արժեքներով առաջնորդվող, աշխատաշուկայում մրցունակ բարձրակարգ մարզիչների ձևավորմանը, որոնք իրենց ներդրումը կունենան հայկական սպորտի հեղինակության ամրապնդմանը միջազգային մրցասպարեզում»: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ շահակիցների պատկերացումները հիմնականում համահունչ են Ռազմավարական ծրագրով սահմանված քոլեջի առաքելությանը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ արտաքին շահակիցները քոլեջի առաքելության շրջանակներում դիտարկում են նաև առողջ ապրելակերպի մշակույթի խթանումը և տարածումը: Վերջինս, սակայն, ՄՈՒՀ-ի կողմից լիարժեքորեն չի դիտարկվել և քննարկվել: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան:

Հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ Շիրակի մարզի, հատկապես Գյումրու, զարգացման նպատակների շրջանակում սպորտի ոլորտում մարդկային ռեսուրսների բացը լրացվում է քոլեջի շրջանավարտների միջոցով: Մարզպետարանի վերլուծության համաձայն, տարածաշրջանի համար առանցքային մարզաձևերն են ծանրամարտը, հունահռոմեական ըմբշամարտը, դյուդոն և բոնցքամարտը, որոնց ուղղությամբ քոլեջը պատրաստում է մասնագետներ:

2024-2029 թվականների Ռազմավարական ծրագրով (ՌԾ) սահմանվել են քոլեջի հիմնարար արժեքները, տեսլականը, զարգացման նպատակները, խնդիրները, գործողությունները, վերջնարդյունքները և ԳԱՑ-երը (Գործունեության Առանցքային Ցուցանիշներ):

Քոլեջի ռազմավարական նպատակներն են՝

1. Մատուցել որակյալ կրթական ծառայություններ՝ պետական կրթական չափորոշիչներին, շահառուների և շահակիցների կարիքներին համապատասխան
2. Մարզական հերթափոխի պատրաստման համակարգի արդիականացում, մարզումների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:
3. Քոլեջի կառավարման համակարգի բարեփոխում և արդյունավետության բարձրացում, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարում, Քոլեջի առաքելությանը, տեսլականին և նպատակներին համապատասխան ենթակառուցվածքների ապահովում:

4. Քոլեջի շարունակական զարգացում՝ ազգային և միջազգային մակարդակներում անընդհատ համագործակցության պայմաններում:

Փաստաթղթերի ուսումնասիրությունն ու փորձագիտական այցը ցույց տվեցին, որ քոլեջի գործունեությունը հիմնականում համահունչ է Ռազմավարական ծրագրի նպատակներին և խնդիրներին: Մասնավորապես, քոլեջը շարունակական աշխատանք է իրականացնում մարզումների համար անհրաժեշտ պայմանների բարելավման ուղղությամբ՝ իր առջև դրված նպատակների իրագործման համար, ինչպես նաև պլանավորում է նախաձեռնություններ նաև մյուս ռազմավարական ուղղություններով:

Ռազմավարական ծրագրի (ՌԾ) նպատակների իրագործման համար կազմվել է պլան-ժամանակացույց, որը ներառում է ռազմավարական նպատակները, խնդիրները, դրանց իրագործման համար անհրաժեշտ գործողությունները, ակնկալվող արդյունքները, պատասխանատուները, վերջնաժամկետները, ռեսուրսների տեսակները (մարդկային, նյութական, ֆինանսական) և ԳԱՑ-եր:

Անհրաժեշտ է նշել, որ, պլան-ժամանակացույցի ԳԱՑ-երը հիմնականում կրկնում են արդյունքները և չեն ապահովում հստակ չափելիություն: Որոշ դեպքերում, սակայն, սահմանված են որոշակի ցուցանիշներ, օրինակ՝ տարեկան 20%-ով վերապատրաստված դասախոսական կազմ, որոնք ունակ են կիրառելու ժամանակակից մեթոդներ, կամ շահակիցների գոհունակության գնահատականի 20% աճ քոլեջի գործունեությունից և հաշվետվողականությունից:

Ռեսուրսների անհրաժեշտությունը ձևակերպված է ընդհանուր ձևով (մարդկային, նյութական, ֆինանսական), բայց կոնկրետ պլանավորում առկա չէ: Վերջնաժամկետները նշվում են շարունակական, պարբերական, 2024-2029 թթ. կամ որոշակի թվականներով: Ըստ ինքնավերլուծության՝ ֆինանսական երկարաժամկետ պլանավորում քոլեջը չի իրականացնում, քանի որ ֆինանսական մուտքերը պայմանավորված են ուսանողների թվով:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսները, մարզիչները և ուսումնաօժանդակ կազմը, իսկ արտաքին շահակիցներն են դիմորդներն ու նրանց ծնողները, շրջանավարտները, գործատուները (ներառյալ պետական, մասնավոր և հասարակական կազմակերպությունները) և ոլորտի համար պատասխանատու պետական մարմինները: Նաև այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը որպես գործատու դիտարկում է Շիրակի մարզի սպորտդպրոցները: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՌԾ-ն մշակվել է աշխատանքային խմբի կողմից, որը կազմված է եղել վարչական կազմի ներկայացուցիչներից, դասախոսներից և ուսանողներից: Ռազմավարական ծրագրում արտացոլված են շահակիցների կարիքները՝ հիմնվելով քոլեջում կազմակերպված հանդիպումների և մարզիչ-մարզիկ սերտ համագործակցության վրա: Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ ռազմավարական նպատակների և առաջնահերթությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը հատկապես արտաքին շահակիցների և կառավարման խորհրդի անդամների շրջանակում սահմանափակ է:

ՌԾ գնահատման հստակ մեխանիզմներ քոլեջում ներկայումս առկա չեն: Ռազմավարական կառավարման մշակույթը քոլեջում ներդրման փուլում է: Ստորաբաժանումների աշխատանքային պլանների և հաշվետվությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք դեռևս լիովին կապակցված չեն ՌԾ նպատակներին:

Դատողություններ: Քոլեջի առաքելությունը և ռազմավարական ծրագրում սահմանված նպատակները համապատասխանում են ազգային և տարածաշրջանային կարիքներին՝ նպաստելով որակյալ մարզիկների և մարզիչների պատրաստմանը: Այնուամենայնիվ, քոլեջի առաքելությունը կարող է դառնալ ավելի ընդգրկուն, եթե ներառի առողջ ապրելակերպի մշակույթի տարածումը: Սա կօգնի քոլեջին ոչ միայն պատրաստել բարձրակարգ մասնագետներ, այլև խթանել համայնքի առողջ ապրելակերպը, ինչը կնպաստի հանրային առողջության բարելավմանը և քոլեջի հեղինակության ամրապնդմանը տարածաշրջանում: Այս ուղղության ընդգրկումը նաև հնարավորություն կտա նոր ծրագրեր մշակել, որոնք կապահովեն քոլեջի դերակատարումը ոչ միայն որպես մարզական, այլև որպես հանրային առողջության կենտրոն: Սա կարող է նաև ֆինանսական մուտքերի բազմազանեցման նոր հնարավորությունների դաշտ ստեղծել:

Դրական է, որ քոլեջը ձեռնարկել է քայլեր ռազմավարական ծրագիր մշակելու ուղղությամբ: Սակայն ծրագրի լիարժեք և արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ է, որ արտաքին շահակիցները (շրջանավարտներ, գործատուներ և այլ շահակիցներ) ավելի ակտիվ ներգրավվեն ծրագրի իրականացման փուլերին: Նրանց մասնակցությունը կօգնի ոչ միայն ուժեղացնել աջակցությունը, այլև ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ, կազմակերպել փորձի փոխանակում և ստեղծել նոր գործընկերային կապեր:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև ՌԾ-ին համապատասխան պլան-ժամանակացույցի մշակման ուղղությամբ աշխատանքները: Սակայն վերջինս որոշակի հստակեցումների կարիք ունի, բացի այդ, քոլեջի հաջողության համար կարևոր է, որ ստորաբաժանումների աշխատանքային պլանները հստակորեն կապված լինեն ռազմավարական ծրագրի նպատակների հետ: Սա թույլ կտա զարգացնել համակարգված համագործակցություն բոլոր մակարդակներում, ինչը կնպաստի առկա գաղափարների և նախաձեռնությունների վերածմանը երկարաժամկետ և կայուն հաջողությունների: Միաժամանակ, սա կարևոր նախապայման է ռազմավարական նպատակների իրագործելիության ապահովման տեսանկյունից:

Բացի այդ, անհրաժեշտ է, որ ռազմավարական ծրագրում սահմանվեն հստակ և չափելի ԳԱՑ-եր, որոնք թույլ կտան օբյեկտիվորեն գնահատել ծրագրի առաջընթացը և արդյունքները: Հստակ չափանիշները կօգնեն ավելի արդյունավետ բաշխել ռեսուրսները, արագ արձագանքել խնդիրներին և ապահովել ծրագրի կատարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Այնուամենայնիվ, փորձագիտական խմբի կողմից գնահատելի են ԳԱՑ-երի սահմանման ուղղությամբ քոլեջի կողմից կատարված առաջին փորձը:

Այս ամենի համատեքստում անհրաժեշտ է, որ ՌԾ-ն ունենա հստակ ֆինանսական պլանավորում՝ նպատակների իրականացման համար: Անհրաժեշտ է փորձել պլանավորել ռեսուրսների բաշխումը, ինչպես նաև ակտիվ քայլեր ձեռնարկել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու ուղղությամբ: Սա կապահովի ծրագրի կայուն ֆինանսավորումը և թույլ կտա իրականացվող նախաձեռնությունները դարձնել արդյունավետ և երկարատև:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի տարածաշրջանային կրթական և սոցիալական ռազմավարական կարևորություն, ինչպես նաև այն հանգամանքը, որ Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի գործունեությունը համահունչ է իր առաքելությանը և ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի պահանջներին, ներդրված է ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացման պլան-ժամանակացույց, իսկ սահմանված նպատակներն ու խնդիրներն ընդհանուր առմամբ արտահայտում են շահակիցների կարիքները, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: «Գյումրու Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի ընթացիկ կառավարումն իրականացվում է քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի՝ քոլեջի խորհրդի և գործադիր մարմնի՝ տնօրենի կողմից: Քոլեջի կառավարման համակարգը բաղկացած է նաև խորհրդակցական մարմիններից՝ մանկավարժական և դաստիարակչական: Քոլեջի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» օրենքներով, Հիմնադրի որոշումներով, Լիազոր մարմնի հրամաններով և իր կանոնադրությամբ: Քոլեջի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Կառավարման խորհրդի արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ խորհուրդը հիմնականում կենտրոնանում է հաստիքացուցակի հաստատման և ֆինանսական հաշվետվությունների քննարկման վրա: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջի կառավարման խորհրդի կազմում ներգրավված են ոլորտում մեծ փորձ ունեցող և լավատեղյակ մասնագետներ: Նրանք տեսնում են հնարավորություններ ոչ միայն պայմանների բարելավման, այլև քոլեջի կողմից հասարակությանը նոր ծառայություններ մատուցելու և ֆինանսական մուտքերի բազմազանեցման համար, ինչը ներկայումս չի իրագործվում:

Քոլեջի ռազմավարական պլանավորումը նոր է ներդրվել: ՌԾ-ի համար մշակվել է պլան-ժամանակացույց, սակայն այն չի ներառում ռազմավարական նպատակներին հասնելու համար պահանջվող ֆինանսական միջոցների հստակ պլանավորում: Ֆինանսական ռեսուրսները բաշխվում են տարեկան պլանավորման հիման վրա՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծով: 2023 թվականի ֆինանսատնտեսական հաշվետվության համաձայն, ծախսերի հիմնական ուղղություններն են աշխատավարձերը (61.4%) և ուսումնական ու այլ նյութերի ձեռքբերումը (35%) և այլն: Նյութերի ձեռքբերումը հիմնականում իրականացվում է ստորաբաժանումների կողմից ներկայացված զեկուցագրերի հիման վրա: Տարվա ընթացքում որոշ խնայողություններ առաջանում են հաստիքների թափուր մնալու կամ ուսանողների՝ մրցումներին և մարզահավաքներին մասնակցելու պատճառով տնտեսված սննդի հաշվին, որոնք հիմնականում ուղղվում են պարգևավճարների տրամադրմանը:

Որպես զարգացման ուղղություն քոլեջը դիտարկում է կից կիսանորոգ շենքի ավարտի հնարավորությունը, որը կարող է զգալիորեն բարելավել ենթակառուցվածքները: Շենքի կառուցումը գրեթե ավարտված է, սակայն այն կարիք ունի ռեսուրսների համալրման և ներքին նորոգման, որոնք ծախսատար են: Շենքում նախատեսված են ժամանակակից

պահանջներին համապատասխան մի շարք դահլիճներ, որոնք կարող են նպաստել քոլեջի գործունեության ընդլայնմանը:

Միջազգային ծրագրերում ներգրավվելու առումով քոլեջը դեռևս բավարար քայլեր չի ձեռնարկել: Սա հիմնականում պայմանավորված է համապատասխան տեղեկատվության և արտաքին հնարավորությունների ուսումնասիրման պակասով: Այնուամենայնիվ, այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջը սկսել է ուսումնասիրել միջազգային ծրագրերում ներգրավվելու հնարավորությունները և ունի որոշակի պլաններ՝ ըստ ռազմավարական ծրագրի:

Ֆինանսական աջակցության որոնման գործընթացում քոլեջը կարևորել է, որ այդ աջակցությունները որևէ կերպ չազդեն արժանի մարզիկների բացահայտման և նրանց առաջընթացի վրա: Արժանի մարզիկների առաջընթացի ապահովումը քոլեջի կառավարման կարևորագույն սկզբունքներից է, ինչը ձևավորվել է տարիների ընթացքում: Այս սկզբունքի շրջանակներում աշխատակիցները, ներդրումներ կատարելով, աջակցել են մարզիկների մասնակցությանը տարբեր առաջնությունների: Սա նաև արտահայտում է քոլեջի նվիրվածությունն իր առաքելությանը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ֆինանսական միջոցներ առկա չեն ստորաբաժանումների կարիքների բավարարման մասով, օրինակ համակարգիչներ և այլն:

Հարկ է նշել, որ բոլոր պաշտոնների համար առկա են պաշտոնների անձնագրեր:

Քոլեջի տնօրենն ունի 4 տեղակալ՝ ուսումնական աշխատանքների, տնտեսական աշխատանքների, մասնագիտական կրթական աջակցությունների, սպորտային աշխատանքների գծով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ սպորտային աշխատանքների գծով տեղակալը ներկայումս կատարում է նաև տնօրենի պարտականությունները, քանի որ երկու հայտարարած մրցույթների արդյունքում տնօրենի պաշտոնը թափուր է մնացել:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքում նախատեսված են որակի ապահովման բաժին և հանձնաժողով: ՌԾ-ի 3-րդ նպատակի գործողություններում ներառված է որակի ապահովման բաժնի գործառույթների ստեղծման գաղափարը: Սակայն որակի ապահովման առանձին ստորաբաժանում կամ հաստիք դեռևս չի ստեղծվել, իսկ որակի ապահովման հանձնաժողովը նոր է սկսել գործունեությունը: Փորձագիտական այցի ընթացքում կարևորվեց որակի ապահովման պատասխանատուի հաստիքի ներդրումը:

Միաժամանակ փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջը մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացման կարիք ունի (օրինակ՝ կադրերի պատասխանատու և այլն): Հարկ է նշել, որ կարիերայի պատասխանատուն ներգրավված է տարբեր աշխատաժողովներում, վերապատրաստումներում և անընդհատ զարգացնում է իր կարողությունները:

Աշխատանքային պլանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որոշ ստորաբաժանումների, խորհուրդների կամ պատասխանատուների (օրինակ՝ դաստիարաչկան խորհուրդ) դեպքում արտահայտված են համագործակցություններ, իսկ որոշների դեպքում՝ ոչ (օրինակ՝ ուսումնական գծով փոխտնօրեն): Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջի տարբեր ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերը լավ զարգացած են, և նրանք ակտիվորեն համագործակցում են միմյանց հետ: Ընդհանուր առմամբ, քոլեջում ձևավորվել է համագործակցային աշխատանքի մշակույթ, որը դարձել է հաստատության կարևոր արժեքներից մեկը: Քոլեջում գործող

խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը, ինչպես նաև նրանց լիազորությունների շրջանակը սահմանվում են քոլեջի կանոնադրությամբ, իրավական ակտերով, պայմանագրերով, կանոնակարգերով և աշխատակարգերով:

Դասախոսական և ուսանողական համակազմերն ընդգրկված են կառավարման, մանկավարժական և դաստիարակչական խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված ուսանողները և դասախոսները նախաձեռնողականություն չեն ցուցաբերում կարիքների և խնդիրների վերհանման ու ներկայացման համար: Ուսանողների կարիքների վերհանումն իրականացվում է մարզիչների և կուրսղեկների միջոցով: Դասախոսները կառավարման գործընթացին հիմնականում մասնակցում են ուսումնական, կրթական հարցերի շրջանակներում: Տեսանելի չեն կառավարման խորհրդի նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման և մյուս շահակիցներին դրանց մասին իրազեկման քայլեր:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով, որոնք ներդրվել են վերջերս: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների աշխատանքային պլանները կապակցված չեն ՌԾ նպատակների հետ: Աշխատանքային պլաններում սահմանված վերջնարդյունքներ առկա չեն, նշված են միայն գործողություններ, որոնք բխում են հիմնական գործառութային շրջանակներից:

Քոլեջում ներքևից վերև հստակ ձևավորված հաշվետվողականության համակարգ դեռևս ներդրված չէ: Որոշ ստորաբաժանումներ ներկայացնում են հաշվետվություններ, սակայն դրանցում հիմնականում արձանագրվում են տվյալներ՝ առանց վերլուծական բաղադրիչի: Հաշվետվողականության հիերարխիան գտնվում է ձևավորման փուլում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կուրսղեկները հաշվետվություններ են ներկայացնում սպորտային գծով փոխտնօրենին, իսկ լաբորանտները՝ համապատասխան պատասխանատուներին: Յուրաքանչյուր մրցումից հետո սպորտի բաժինը ներկայացնում է հաշվետվություն մարզիկների արդյունքների վերաբերյալ:

Դասախոսների հաշվետվություններում նշվում են դասի թեման, կուրսը, կիրառվող մեթոդները, ծանրաբեռնվածությունը և ուսանողների առաջադիմությունը: Սակայն հաշվետվությունների «առաջարկություններ» բաժինը հիմնականում լրացված չէ:

Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ տնօրենի տարեկան հաշվետվության մեջ ևս վերլուծական բաղադրիչ առկա չէ, հաշվետվությունները հիմնականում նկարագրական են՝ սակավ տվյալներով:

Քոլեջում արտաքին գործոնների վերաբերյալ վերլուծությունների և տվյալների հավաքագրման համակարգված գործընթացներ դեռևս չկան: Չնայած կարիերայի պատասխանատուն որոշ տվյալներ է հավաքագրում շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, այդ տվյալները չեն վերլուծվում և չեն դառնում ղեկավար կազմի որոշումների հիմք:

Վերջերս քոլեջում իրականացվել են դասախոսների, ուսանողների և շրջանավարտների շրջանում հարցումներ: Այս հարցումների արդյունքները ենթարկվել են նախնական վերլուծությունների, և կազմվել են որոշ առաջարկություններ, սակայն դրանք դեռևս չեն վերածվել որոշումների կայացման գործնական հիմքերի:

Մարզիկների հաջողությունների վերաբերյալ տվյալները պարբերաբար հավաքագրվում են և ակտիվորեն քննարկվում: Այնուամենայնիվ, այս քննարկումները հիմնականում չեն փաստաթղթավորվում: Այս համատեքստում, քոլեջը կարևորում է որակի

ապահովման պատասխանատուի նշանակումը, որը կկարողանա համակարգված ձևով հավաքագրել առկա տվյալները, վերլուծել և ներկայացնել դրանք որոշումների կայացման նպատակով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարզիչների գործունեությունն իրականացվում է «պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում» (ՊԻԳԲ) շրջափուլով: Չնայած այս գործընթացը փաստաթղթավորված չէ, այն ձևավորվել է որպես գործնական մշակույթ: Մյուս մակարդակներում ՊԻԳԲ շրջափուլը դեռևս խնդրահարույց է և գտնվում է տարբեր փուլերում: Փաստաթղթերի մշակման, դրանց ներդրման, ընթացակարգերի գնահատման և բարելավման գործընթացները դեռևս համակարգված չեն: Առկա են փաստաթղթեր, որոնք չեն կիրառվում (Որակի ապահովման բաժնի կանոնադրություն, ԳՕՀՊՄՔ դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և խրախուսման կարգ և այլն): Մի շարք փաստաթղթեր ունեն բովանդակային և ձևաչափային խնդիրներ կամ չունեն համապատասխան հաստատումներ (ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություն, ամփոփագրեր, հաշվետվություններ, պլաններ և այլն):

Մարզիկների հաջողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայումս տարածվում է քոլեջի ներսում և լրատվամիջոցների միջոցով, սակայն քոլեջը պլանավորում է ակտիվացնել իր ֆեյսբուքյան էջը՝ այս տեղեկատվությունը ավելի լայն հասանելի դարձնելու համար: Այս գործընթացը նախատեսվում է իրականացնել Կարիերայի պատասխանատուի միջոցով:

Հարկ է նշել, որ քոլեջը դեռևս չունի միասնական, կենտրոնացված տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն կտա հավաքել և կառավարել տվյալները մեկ ընդհանուր բազայով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դական է համարում, որ քոլեջում առկա են կոլեգիալ և միանձնյա կառավարման մեխանիզմներ, որոնց գործունեությունը կանոնակարգված է համապատասխան փաստաթղթերով: Սակայն կառավարման խորհուրդը կենտրոնացած է օպերատիվ հարցերի վրա, ինչպիսին են հաստիքացուցակի հաստատումը կամ ֆինանսական հաշվետվությունների քննարկումը՝ ռազմավարական զարգացման առաջնահերթ հարցերը թողնելով երկրորդ պլանում: Խորհրդի գործունեությունն անհրաժեշտ է ուղղել նաև ռազմավարական որոշումների կայացման, դրանց իրագործման վերահսկման և արդյունավետության գնահատման ուղղություններով: Կարևոր է, որ դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը կոլեգիալ մարմիններում զարգանա նախաձեռնողականության բարձրացմամբ՝ ապահովելով նոր գաղափարների ներկայացում և բազմակողմանի խնդիրների լուծում: Վերոնշյալը կնպաստի խնդիրների առավել օպերատիվ բացահայտմանն ու համակողմանի դիտարկմանը, նոր հնարավորությունների ի հայտ բերելուն և երկարաժամկետ զարգացման ուղիների նախանշմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կարևորել է ռազմավարական երկարաժամկետ պլանավորումը և մշակել ու ներդրել է 2024-2029 թթ. ՌԾ: Ինչ վերաբերում է երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններին և դրանց փոխկապակցմանը, ապա փորձագիտական խումբը արձագանքում է, որ դեռևս ռազմավարական նպատակներն ու խնդիրները լիարժեքորեն չեն արտացոլվել կարճաժամկետ աշխատանքային պլաններում, և բացակայում են կարճաժամկետ հստակ արդյունքները, որոնք կարող են ապահովել ռազմավարական նպատակների աստիճանական իրագործումն ու գնահատումը: Այս ամենը հանգեցնում է նրան, որ ռազմավարական նպատակների իրագործումն այս փուլում չունի բավարար երաշխիքներ: Փորձագիտական

խումբը կարևորում է, որ քոլեջը մշակի հաշվետվողականության հստակ մեխանիզմներ և կապակցի ստորաբաժանումների գործունեությունը ռազմավարական ծրագրի հետ՝ ապահովելով գործողությունների արդյունավետության և նպատակների իրագործման վերահսկողություն:

Քոլեջի համագործակցային մշակույթը և աշխատակիցների մասնագիտական զարգացման մոտիվացվածությունը ամուր հիմք են կազմակերպության արդյունավետության համար: Սակայն ռազմավարական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ռեսուրսների ներգրավում, հատկապես որակի ապահովման ոլորտում, ինչպես նաև աշխատակիցների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում: Անդրադառնալով ֆինանսական մուտքերին, փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը չի օգտագործում ֆինանսական մուտքերի բազմազանեցման ընտրանքները, ինչը սահմանափակում է զարգացման հնարավորությունները: Փորձագիտական խումբը գնահատելի է համարում, որ քոլեջը ֆինասնական մուտքերի հնարավորությունները դիտարկելիս կարևորում է քոլեջում ձևավորված արժեհամակարգային մոտեցումները, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ հնարավորությունների դաշտը առավել ընդլայնված (միջազգային ու տեղական տարբեր ծրագրեր, հանրային ծառայությունների մատուցում և այլն) դիտարկելու և այս ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկելու կարիք կա: Փորձագիտական խումբը կարևորում է նաև կիսանորոգ շենքի ավարտն ու գործածումը, այս տեսանկյունից ևս կարևոր կլինի քոլեջի նախաձեռնողականության դրսևորումը՝ գուցե պետական կամ այլ աջակցություն ստանալու նպատակով: Այս ամենը կարող է նպաստել ֆինանսական բավարար մուտքերի ապահովմանն ու ֆինանսական ռիսկերի կառավարմանը: Բացի այդ, գործողությունների և ծախսերի առաջնահերթությունների որոշումը կնպաստի ֆինանսական պլանավորման արդյունավետության մեծացմանը: Որակի կառավարման գործընթացները ներկայումս լիարժեք չեն կիրառվում քոլեջի բոլոր մակարդակներում, չնայած մարզիչների գործունեության պարագայում որոշ գործառույթներ համապատասխանում են «պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում» շրջափուլին: Այս մոտեցումը պետք է ընդլայնվի և փաստաթղթավորվի՝ ապահովելով կառավարման համապարփակությունը և գործընթացների շարունակական բարելավումը: Փաստաթղթավորման մշակույթի ամրապնդումը և ՊԻԳԲ մոտեցման ներդրումը կօգնեն քոլեջին համակարգել գործողությունները և հասնել որակական առավել մեծ արդյունքների:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը դեռևս հավաքագրում է տվյալների բավականիին նեղ շրջանակ է (օրինակ՝ մարզիկների հաջողությունների, շրջանավարտների զբաղվածության մասին, որոշ հարցումներ), որոնք դեռևս համակողմանի չեն վերլուծվում, հաշվետվություններն էլ նկարագրական են և վերլուծական տարր չեն պարունակում: Մինչդեռ, արտաքին գործոնների վերաբերյալ վերլուծությունները և տվյալների հավաքագրումը, դրանց վերլուծությունն ու հաշվետվությունների վերլուծական հենքով կազմումը, որակի ապահովման համակարգի ձևավորումը կարող է նպաստել տվյալահենք կառավարման համակարգի կայացմանը, վերլուծական և փաստարկված որոշումների կայացման մշակույթի ձևավորմանը:

Չնայած քոլեջը սկսել է քայլեր ձեռնարկել որոշումների հրապարակայնությունն ապահովելու ուղղությամբ, մարքեթինգային նախաձեռնությունները և որոշումների թափանցիկությունը դեռևս բավարար չեն: ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, արտաքին շահակիցների հետ ավելի խորը համագործակցությունը և

մարքեթինգային քայլերի ընդլայնումը կնպաստեն քոլեջի ազգային և միջազգային ծրագրերում ներգրավման հնարավորությունների ընդլայնմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՕՀՊՄՔ արտաքին շահկիցները ակտիվորեն ներգրավված չեն ռազմավարական կառավարման գործընթացում, ՄՈՒՀ-ի ղեկավար անձնակազմի կողմից տեսանելի չէ նախաձեռողականություն ֆինանսական այլընտրանքային եկամուտների ներգրավման ուղղությամբ, առկա չէ կապ ռազմավարական երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումների միջև, ձևավորված չեն գործունեության արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ, առկա չեն քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների բազմակողմանի ուսումնասիրման մոտեցումներ, ՊԻԳԲ շրջափուլը դեռևս վարչարարության իրականացման մշակույթ չէ, առկա չեն տվյալների հավաքագրման հստակ մեխանիզմներ, ինչպես նաև կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին հրապարակումներ ու դրանք գնահատող մեխանիզմներ, կառավարման որոշումների թափանցիկությունը դեռևս բավարար չէ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՕՀՊՄՔ-ը **չի բավարարում** չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է անբավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

«Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ն իրականացնում է միջին մասնագիտական մեկ կրթական ծրագիր՝ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ»: Քոլեջի հիմնական մարզաձևերն են ըմբշամարտը (ազատ և հունահռոմեական ոճեր), ծանրամարտը, ձյուդոն և բռնցքամարտ: Նշենք, որ քոլեջում իրականացվում են նաև այլ մարզաձևեր, օրինակ՝ թեթև աթլետիկա:

Վերջին տարիների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ քոլեջում ուսանողների թիվը փոփոխական է: 2023-2024 ուսումնական տարում քոլեջում սովորողների թիվը կազմել է 93:

Քոլեջն իր գործունեությունը կազմակերպում է պետական կրթական չափորոշչի (ՊԿՉ) համաձայն: ՄՈՒՀ-ի սպորտային գծով փոխտնօրենը մասնակցել է 2021 թվականին ՊԿՉ-ի վերանայման գործընթացին՝ առաջարկելով պահպանել ֆիզիոլոգիայի համար նախատեսված ժամաքանակը: 2023 թվականի ուսումնական պլանի համաձայն՝ քոլեջում ներառված է ընտրովի դասընթաց՝ «Ուժային պատրաստության մեթոդիկա», սակայն 2024 թվականի ուսումնական պլանում նախասիրական և ընտրովի դասընթացներ ներդրված չեն: Վերջին տարիներին ՊԿՉ-ում տեղի են ունեցել փոփոխություններ, ներառյալ պրակտիկաների տևողության կրճատում և որոշ մոդուլների վերանայում, ինչպես նաև գործնական ժամերի ավելացում:

Քոլեջի ուսումնական պլաններում ներառված են հետևյալ պրակտիկայի տեսակները.

- Արտադրական պրակտիկա (ներառյալ տեսական և ոչ տեսական ուսուցումը),
- Նախաավարտական պրակտիկա:

Այս պրակտիկաների հիմնական նպատակն է պատրաստել ուսանողներին մարզչական գործունեության համար: Պրակտիկաների ընթացքում ուսանողները ներգրավվում են մարզչական աշխատանքներում և իրականացնում մարզչի գործունեություն՝ աջակցելով տարբեր տարիքային խմբերի մարզիկների և ուսանողների մարզումներին:

2023թ. ուսումնական պլանի համաձայն՝ ուսանողների պրակտիկաները բաժանվում են ըստ կուրսերի՝

- 2-րդ և 3-րդ կուրսերում նախատեսված է տեսական և ոչ տեսական պրակտիկա՝ յուրաքանչյուրն 2 շաբաթ տևողությամբ,
- 4-րդ կուրսում նախատեսված է տեսական և ոչ տեսական պրակտիկա՝ 3 շաբաթ տևողությամբ, ինչպես նաև նախաավարտական պրակտիկա՝ 6 շաբաթ տևողությամբ:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները լրացնում են օրագիր, որտեղ արձանագրվում են նրանց կատարած աշխատանքները, կիրառած մեթոդները և ձեռք բերած փորձը: Մարզիչներն ամփոփում են պրակտիկայի արդյունքները՝ գնահատելով ուսանողների մարզչական հմտությունները: Մասնավորաբար, փորձագիտական այցից պարզվեց, որ նկատի է առնվում պրակտիկանտի՝ մարզիկների հետ հաղորդակցումը, անհատական մոտեցումները, պարապմունքների անցկացման համար գրաֆիկների մշակումը և արդյունքի ապահովումը, չնայած որ սրանք հստակ ամրագրված չեն գնահատման չափանիշներով: Այս գնահատականը ներառվում է հաշվետվությունում, որը ներկայացվում է սպորտային գծով փոխտնօրենին: Բացի պաշտոնական պրակտիկաներից, ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու մարզչական աշխատանքներին և որպես մրցավարներ ներգրավվելու տարբեր մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման գործընթացում: Սա աշխատանքի վրա հենված ուսուցման որոշակի դրսևորում է:

Քոլեջում դասախոսների կողմից դասավանդման մեթոդների ընտրության միասնական մոտեցում չի կիրառվում: Յուրաքանչյուր դասախոս ընտրում է մեթոդները՝ հաշվի առնելով մարզաձևերի յուրահատկությունը և ուսանողների պատրաստվածության մակարդակը:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքները ցույց են տալիս, որ դասավանդման հիմնական գործընթացը կատարվում է քոլեջում: Դասախոսները փորձում են ապահովել ուսումնառության արդյունքները հենց լսարանում, իսկ տնային ինքնուրույն առաջադրանքներ հազվադեպ են հանձնարարվում՝ պայմանավորված մարզիկների գերզբաղվածությամբ:

Դասախոսները կիրառում են դասավանդման բազմազան մեթոդներ, ինչպիսիք են՝ հարց ու պատասխան, տեսանյութերի դիտում, խնդիրների բացահայտում և քննարկում, ինչպես նաև ցուցադրական մեթոդներ (օրինակ՝ դիդակտիկ նյութեր, մուլյաժներ և այլն): Սակայն, վերլուծական մտքի զարգացմանը նպաստող առաջադրանքները սակավաթիվ են: Առկա են որոշ դրական օրինակներ, երբ ուսանողները «Ընտրած մարզաձևի տեսության հիմունքներ» մոդուլի շրջանակում կազմում են բեռնվածության գրաֆիկներ, դիտարկում մրցումների հայտնի մասնակիցներին, վերլուծում նրանց ուժեղ կողմերն ու թերությունները, ինչպես նաև մրցումներից հետո կատարում արդյունքների վերլուծություն՝ սխալների հիման վրա առաջարկելով բարելավումներ: Նշենք, որ ինքնուրույն աշխատանքներ կամ ռեֆերատներ ուսանողներին հիմնականում չեն հանձնարարվում, բացառությամբ առանձին դեպքերի, օրինակ՝ ուսանողները հավաքում են տվյալներ օլիմպիական չեմպիոնների մասին:

Քոլեջը հետևում է ԳՕՀՊՄՔ-ի «Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման» կանոնակարգին: Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ուսանողները հանձնում են մոդուլներ և առարկաներ՝ համաձայն տվյալ տարվա ուսումնական պլանի, որի շրջանակում գնահատումն իրականացվում է հետևյալ ձևաչափերով՝ քննություն, ստուգարք կամ տարբերակված ստուգարք:

Ուսանողների ընթացիկ գնահատումն իրականացվում է 10 բալանոց համակարգով: Մոդուլների արդյունքները ամփոփվում են «անցել է» կամ «չի անցել» ձևաչափով, որի հիման վրա հաշվարկվում է վերջնական գնահատականը: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները կարող են բողոքարկել գնահատականները, սակայն նման դեպքեր մինչ օրս չեն եղել: Հարկ է նշել, որ ընտրված մարզաձև մոդուլի շրջանակներում գլխավորապես շեշտադրված են գործնական կարողությունները: Մյուս մոդուլների պարագայում նկատելի են և՛ տեսական գիտելիքների, և՛ գործնական կարողությունների գնահատմանն ուղղված հարցեր, հանձնարարականներ:

Քոլեջում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ ատեստավորման քննություններ երկու հիմնական մոդուլներից՝ «Ընտրած մարզաձև» և «Ֆիզիկական դաստիարակության տեսության հիմունքներ»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի գործունեության առանձնահատկություններից ելնելով՝ ուսումնական գործընթացը մեծապես ուղղված է տեսական գիտելիքների կիրառմամբ կարողությունների ձևավորմանը: Այսինքն գործնական կարողությունների ձևավորումն է մեծապես շեշտադրված թե՛ դրանց ձևավորման, թե՛ գնահատման առումով, ուստի, ամփոփիչ ատեստավորման ընթացքում հաստատությունը հարկ է համարել շեշտադրելու տեսական և բացատրական հարցերը՝ հաղթահարելու տեսական գիտելիքների և հաղորդակցման հմտությունների որոշակի եղած բացը, և հարցաշարն էլ կազմվում է այդ սկզբունքով:

Քոլեջը դեռևս չունի համեմատական վերլուծության իրականացման մշակված մեթոդաբանություն, և նման վերլուծություններ չեն իրականացրել: Այնուամենայնիվ, Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հետ համագործակցության շնորհիվ քոլեջը կարողանում է ուսումնասիրել և կիրառել այնտեղի հաջողված փորձերը: Բացի այդ, քոլեջը ուսումնասիրում և ներառում է միջազգային լավագույն փորձը մարզչական գործընթացներում՝ մրցումների և ուսումնամարզական հավաքների շրջանակներում:

ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ների մշտադիտարկման համար կանոնակարգ առկա չէ: Այնուամենայնիվ, քոլեջում իրականացվում են դասախոսների փոխադարձ դասալսումներ դասավանդման բարելավման նպատակով, որոնց արդյունքները քննարկվում են: Այլ մեխանիզմներ այս ուղղությամբ առկա չեն, և տվյալներ չեն հավաքագրվում ՄԿԾ-ների շարունակական բարելավման համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը գործող «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» կրթական ծրագրով մեծապես նպաստում է ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, ներառելով ոչ միայն տեսական, այլև գործնական բաղադրիչներ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում հատուկ ուշադրություն է հատկացվում գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը՝ ուսանողների համար առավելագույնս հնարավորություն ստեղծելով՝ ներգրավվելու որպես մարզիչ աշխատանքներում: Ուսանողներին ընձեռվող հնարավորությունը մասնակցելու մարզչական աշխատանքներին և տարբեր տարիքային խմբերի մարզիկների մարզումներին թույլ է տալիս տեսական գիտելիքները կապել

գործնական կիրառման հետ, ինչը խթանում է ուսանողների ինքնուրույնության և մասնագիտական ինքնադրսևորմանը:

Յուրաքանչյուր կուրսի համար իրականացվող պրակտիկաների համակարգված մոտեցումը, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման ընթացքում տեսական և բացատրական բաղադրիչի կարևորումը խոսում են ծրագրի արդյունավետ կառուցվածքի մասին: Ընդ որում հարկ է նշել, որ խոսքային կարողությունների ընթացիկ զարգացման համար խիստ նպաստավոր են գլխավորապես լսարանում նյութի յուրացմանն ուղղված աշխատանքները, որոնք իրականացվում են զրույցների, քննարկումների և այլնի միջոցով:

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է, որ դասախոսները հետևողականորեն հանձնարարեն առաջադրանքներ, որոնք ուղղված են ուսանողների վերլուծական, ինչպես նաև գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը: Այս մոտեցումը կնպաստի ուսանողների վերլուծական մտածողության խթանմանը, քննադատական մոտեցման ձևավորմանը և բանավոր ու գրավոր արտահայտման հմտությունների զարգացմանը:

Դասալսումների, փոխադարձ դասալսումների և փորձի փոխանակման մեխանիզմները վկայում են քոլեջում ձևավորված համագործակցային մշակույթի մասին, ինչը նպաստում է դասավանդման մեթոդների շարունակական կատարելագործմանը: Կարիք կա, սակայն, համակարգված քաղաքականության, որում ամրագրված կլինեն ՄԿԾ-ների շարունակական բարելավման մեխանիզմները և համեմատական վերլուծության գործիքները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը, նույիսկ ոչ պաշտոնական մակարդակով, փորձի փոխանակում է իրականացնում Երևանի համանման քոլեջի հետ, ինչը հնարավորություն է տալիս համեմատելու և ուսումնասիրելու եղած լավագույն փորձը: Բացի այդ, դասախոսների կողմից միջազգային մրցումների արդյունքների վերլուծությունը ևս դիտարկվում է որպես դրական քայլ: Այնուամենայնիվ, այս գործընթացների համակարգումը և փաստաթղթավորումը կարող են նպաստել կրթական ծրագրի համակարգային և շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում իրականացվող «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» կրթական ծրագիրը ներառում է տեսական և գործնական բաղադրիչների արդյունավետ համադրություն, ինչպես նաև ապահովում է ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացումը՝ պրակտիկայի և մարզչական աշխատանքի միջոցով, դասախոսները կիրառում են դասավանդման և գնահատման բազմազան մեթոդներ, առկա է որոշակի նախադրյալներ համեմատական վերլուծություն իրականացնելու փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Քոլեջում ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված կարգի համաձայն: Ընդունելությունն իրականացվում է մրցութային կարգով՝ առաջնահերթություն տալով այն դիմորդներին, ովքերունեն բարձր մարզական պատրաստվածություն, հաղթահարել են նորմատիվ պահանջները և ցուցաբերել բարձր միջին որակական գնահատականներ:

Ուսանողների հավաքագրման նպատակով Քոլեջը կազմակերպում է մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ: Դիմորդների նախնական ընտրության համար մարզիչները գործուղվում են տարբեր մրցումների՝ որպես դիտորդներ: Ընդունելությունից առաջ Քոլեջում անցկացվում են «Բաց դռներ» տեղեկատվական միջոցառումներ, որոնց ընթացքում դիմորդներին ներկայացվում են հաստատության կրթական ծրագրերը, դրա առավելությունները և կարիերայի հնարավորությունները:

Դիմորդների հավաքագրման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար մարզիչների վերահսկողությամբ կազմակերպվում են ուսումնամարզական հավաքներ՝ տարբեր մարզաձևերից: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման գործընթացում հիմնական դերակատարություն ունեն մարզիչները: Դիմորդների մեծ մասը գալիս է մարզիչների հասարակական խմբակներից կամ քոլեջի հանրակրթական դպրոցի աշակերտների շրջանակից:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում. օրինակ, 2019-2020 ուսումնական տարվա համեմատ 2023-2024 ուսումնական տարում ուսանողների թիվն աճել է՝ հասնելով 93-ի, առավելագույն թվով ուսանողներ սովորել են 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում՝ 111 ուսանող:

Ինչ վերաբերում է ուսանողների հեռացումներին, ապա վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ հեռացումները սակավ են, և հիմնական պատճառը եղել է արտագաղթը:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով սահմանված քաղաքականություն և ընթացակարգեր քոլեջում առկա չեն, սակայն ուսանողների կարիքների վերհանման հիմնական մեխանիզմը կուրսերին կցված կուրսղեկներն են: Կարիքների վերհանման գործում կարևոր նշանակություն ունեն մարզիչների հետ բանավոր հաղորդակցումը: Այս հաղորդակցման արդյունքում լուծվում են ընթացիկ հարցեր, օրինակ պարապմունքների ժամանակացույցի փոփոխություն, կամ դրանց ծավալի քչացում և այլն:

Քոլեջում քննաշրջանների և ամփոփիչ ատեստավորման նախաշեմին, ինչպես նաև ուսումնամարզական հավաքների ընթացքում ուսանողների բացակայությունների դեպքում, դասախոսները կազմակերպում են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություններ: Խորհրդատվությունների ժամանակացույցի վերաբերյալ տեղեկացումները ուսանողներին տրամադրվում են կուրսղեկների միջոցով:

Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն իրականացվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով, սակայն հարցերի դեպքում ուսանողները նախընտրում են դիմել մարզիչներին:

Հարկ է նշել, որ ուսանողների համար նաև ձևավորվում է հատուկ սննդակարգ, և քոլեջը կազմակերպում է նրանց սնունդը քոլեջի ճաշարանում: Փորձագիտական այցից պարզվեց, որ ուսանողները գոհ են այս գործընթացից:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի պատասխանատու: Փորձագիտական այցից պարզ դարձավ, ոչ կարիերայի պատասխանատուն կազմակերպում է թեմատիկ սեմինար-դասընթացներ և ճանաչողական խաղեր, որոնք նպատակ ունեն ուսանողներին ծանոթացնել տարբեր երկրների մշակույթների, բարձրացնել նրանց իրազեկվածությունը իրենց իրավունքների վերաբերյալ և այլ թեմաների շուրջ: Այնուամենայնիվ, ուսանողների մասնակցությունը սակավ է (մոտ 10-15 ուսանող), ինչը հիմնականում պայմանավորված է նրանց մարզումներին ակտիվ մասնակցությամբ: Կարիերայի պատասխանատուն վերապատրաստում է անցել Կազա Շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից, ներդրել Բաց կրթության պատկերի մեթոդը և կիսվել այդ փորձով դասախոսների շրջանում:

2022 թվականին, ուսանողների կարիքները հաշվի առնելով, կարիերայի պատասխանատուն չորրորդ կուրսի ուսանողների հետ կազմակերպել է քաղաքի ճանաչողական այցեր: Այն նպատակ ուներ հայտնաբերելու և ներկայացնելու Գյումրիի տեսարժան վայրերը, որպեսզի արտերկրից ժամանած մարզիկներին առաջարկվի մշակութային ժամանց:

Քոլեջը կարիերայի զարգացման աշխատանքների շրջանակում կիրառում է շրջանավարտների տվյալների բազան՝ մարզադպրոցներում մարզիչների թափուր տեղերը համալրելու համար: Սակայն անհրաժեշտ է նշել, որ տվյալ բազան դեռևս չունի բավարար տեղեկատվական հագեցվածություն և տվյալները սահմանափակ են:

Կարիերայի պատասխանատուն նախատեսում է իրազեկման միջոցառումներ իրականացնել շրջանավարտների շրջանում՝ թափուր աշխատատեղերի մասին տեղեկություններ տրամադրելու նպատակով: Չնայած պատասխանատուն ԿԳՄՄՆ-ին ներկայացնում է հաշվետվություններ՝ համաձայն նախատեսված ձևաչափի, հավաքագրված տվյալները չեն վերլուծվում և գործնականում չեն կիրառվում քոլեջի կարիերայի զարգացման ծրագրերի արդյունավետության բարելավման նպատակով:

Շրջանավարտների տվյալների բազան ներառում է տեղեկություններ, որոնք հավաքագրվում են նրանց ավարտելուց հետո երեք ամսվա ընթացքում, սակայն տվյալները հետագայում չեն թարմացվում: Քոլեջի առանձնահատկություններից ելնելով՝ որտեղ շրջանավարտների մեծամասնությունը տղաներ են և զորակոչվում են բանակ, երեք ամսվա ընթացքում հավաքագրված տվյալները հաճախ ցույց են տալիս զբաղվածության բացակայություն: Սակայն իրական պատկերը փոխվում է, երբ շրջանավարտները վերադառնում են բանակից հետո և սկսում աշխատել իրենց մասնագիտությամբ:

Անդրադառնալով ուսանողների մասնակցությանը հետազոտական աշխատանքներին՝ փորձագիտական խումբը նշում է, որ ուսանողները պարբերաբար վերլուծում են հայտնի մարզիկների գործունեությունը, իրենց մրցակիցներին, ինչպես նաև դիտում են մրցումների տեսանյութեր՝ վերլուծելով ուժեղ և թույլ կողմերը: Սակայն այս վերլուծությունները հիմնականում կատարվում են բանավոր մակարդակում և չեն ձևակերպվում որպես գրավոր աշխատանքներ: Հարկ է նշել, որ ուսանողների

հետազոտական հմտությունների զարգացման նպատակով նրանց չեն հանձնարարվում ռեֆերատներ կամ կուրսային աշխատանքներ։

Ուսանողական խորհուրդը նախատեսվող միջոցառումները ներառում է տարեկան աշխատանքային պլանում, սակայն այդ պլանը պաշտոնապես հաստատված չէ։ Խորհրդի նիստերը արձանագրվում են։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն համակրգված գործունեություն և պլանավորված գործունեություն դեռևս չի ծավալում։ Կազմակերպված միջոցառումների թիվը սահմանափակ է, և դրանցում ուսանողների ներգրավվածությունը սակավ է։ ՈՒԽ-ն բաղկացած է 5 անդամներից, իսկ տեղեկատվության տարածումն իրականացվում է միայն նրանց միջոցով։

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմը վերջերս անցկացված հարցումն է, որը փորձնական բնույթ է ունեցել։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Գյումրու Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում ուսանողների ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը, ինչի շնորհիվ ուսումնական հաստատությունում սովորում են արդեն իսկ բարձր մարզական պատրաստվածություն ունեցող սաներ, որն էլ նախադրյալ է հանդիսանում մարզական հաջողությունների գրանցման համար։ Ինչպես նաև փորձագիտական խումբը կարևորում է ուսանողների հավաքագրման արդյունավետ մեխանիզմները, ինչը նպաստել է վերջին տարիներին ուսանողների թվաքանակի ավելացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջում գործող խորհրդատվության առկայությունը, որը ոչ միայն բարձրացնում է ուսանողների պատրաստվածությունը քննական գործընթացին, այլև կարևոր նշանակություն ունի մարզական հավաքներում գտնված ու դասապրոցեսից բացակայած ուսանողների համար բաց թողած ուսումնական նյութը յուրացնելու համար։ Չնայած ուսանողների կարիքների վերհանման և աջակցման գործընթացները դեռևս չունեն համակարգային բնույթ, քոլեջը ցուցաբերում է որոշակի ճկունություն անհատական մոտեցումների միջոցով։ Կուրսղեկների և մարզիչների օպերատիվ մասնակցությունն ապահովում է ուսանողների խնդիրների արագ լուծումը, ինչը կարևոր նախադրյալ է համակարգված աջակցության ձևավորման համար։

Փորձագիտական խումբը կարևորում է ԳՕՀՊՔ-ում կարիերայի պատասխանատուի մոտվացված և պրոֆեսիոնալ գործունեությունը, որը նպաստել է ուսանողների շրջանում փոխանցելի հմտությունների զարգացմանը։ Սակայն կարևոր է համապատասխան միջոցառումներին ուսանողների առավել լայն շրջանակի ներգրավվածության ապահովումը։ Փորձագիտական խումբը կարևորում է շրջանավարտների հետագծի ուսումնասիրությունը երկարաժամկետ կտրվածքով, որը թույլ կտա իրական ցուցանիշների արձանագրմանը և կարիերայի աջակցության ծրագրերի հետագա զարգացմանը։

Անդրադառնալով Ուսանողական խորհրդի գործունեությանը՝ փորձագիտական խումբը նշում է, որ ՈՒԽ-ն դեռևս չի գործում համակարգված և պլանավորված ձևով, ինչը խոչընդոտում է խորհրդի առաքելության լիարժեք իրականացմանը։ Ուսանողների ներգրավվածությունը ՈՒԽ-ի կողմից կազմակերպվող միջոցառումներին տեսանելի չէ, ինչը կարող է ազդել ոչ միայն միջոցառումների մասշտաբի, այլև դրանց արդյունավետության վրա։ Սա կարող է նվազեցնել ուսանողների հետաքրքրվածությունն ՈՒԽ-ի հանդեպ և

սահմանափակել խորհրդի դերն ուսանողական կարիքների ներկայացման և լուծումներ գտնելու հարցում:

Ուսանողների հետազոտական հմտությունների զարգացումը ևս բավարար մակարդակում չէ. վերլուծական աշխատանքները հիմնականում կատարվում են բանավոր ձևաչափով և չեն վերածվում գրավոր և փաստաթղթավորված արդյունքների, ինչը սահմանափակում է ուսանողների վերլուծական կարողությունների զարգացումը: Այնուամենայնիվ, մարզական վերլուծությունների առկա փորձը կարելի է դիտարկել որպես հետագա զարգացումների հիմք:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՕՀՊՄՔ-ը քայլեր է ձեռնարկել ուսանողների աջակցման մեխանիզմների ձևավորման և կարիերայի զարգացման ուղղությամբ, ապահովում է ուսանողների կրթական միջավայրի արդյունավետությունը, ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր դեր ունեն կուրսղեկներն ու մարզիչները, որոնք լուծում են ընթացիկ խնդիրներ՝ ապահովելով ուսանողներին աջակցություն, կարիերայի պատասխանատուի գործունեությունը վկայում է ուսանողների աջակցման գործընթացների զարգացման ներուժի մասին, փորձագիտական խումբը գտնում է, որ որ ԳՕՀՊՄՔ-ը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի ինստիտուտցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ ՄՈՒՀ-ի 2024-2029 թթ.-ի ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է զարգացնել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներուժը:

Սահմանված նպատակի իրագործման համար ՌԾ-ում սահմանվել են հետևյալ քայլերը՝

- ապահովել դասախոսական կազմի, մարզիչ - մանկավարժների համար համապատասխան պայմաններ ու խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող վերապատրաստման դասընթացներին, կրթական նոր տեխնոլոգիաներին, դասավանդման ինտերակտիվ մեթոդներին տիրապետելու համար,
- բազմազանեցնել աշխատողների մասնագիտական աճի խրախուսման ձևերը,
- կարիքների գնահատման հիման վրա դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի ՏՏ և օտար լեզուների իմացության կոմպետենցիաների զարգացմանը միտված վերապատրաստումների իրականացում,
- մշակել և ներդնել դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմերի աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգ:

Չնայած ռազմավարական ծրագրում վերոնշյալ նախատեսումներին, դրանց իրականացման համար անհրաժեշտ քայլեր դեռևս չեն ձեռնարկվել, և համապատասխան նախադրյալներ նույնպես դեռևս չեն ստեղծվել:

Քոլեջը նախատեսում է դասախոսների ընտրությունը կազմակերպել ըստ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի: Ընտրության գործընթացում առաջնահերթ ուշադրություն է դարձվելու դասախոսի մասնագիտական և անձնական որակների համապատասխանությանը ՄԿԾ-ի պահանջներին: Մասնավորապես, հաշվի է առնվելու մասնագիտական որակավորումը, դասախոսի պաշտոնի անձնագրին համապատասխանությունը, ինչպես նաև դասավանդման փորձը: Այնուամենայնիվ, այս կարգն առայժմ չի կիրառվել:

Ներկայումս քոլեջում աշխատում են 74 աշխատակից, որոնցից՝ դասախոսական կազմ՝ 32, մարզչական կազմ՝ 20, վարչատնտեսական և ուսումնաօժանդակ կազմ՝ 52: Մարզիչները հիմնականում քոլեջի շրջանավարտներ են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարբեր տարիների շրջանավարտներ վերադառնում են քոլեջ՝ որպես դասախոս կամ մարզիչ:

Քոլեջում դասավանդում են 32 դասախոս, որոնցից 31-ը ունեն բարձրագույն կրթություն, իսկ 1-ը՝ միջին մասնագիտական: Մարզիչների կազմում 19-ը բարձրագույն կրթություն ունեն, իսկ 1-ը՝ միջին մասնագիտական: Փորձագիտական ուսումնասիրությունները նաև ցույց տվեցին, որ դասախոսները դասավանդում են նվազագույնը մեկ, իսկ առավելագույնը՝ չորս մոդուլ:

2024 թվականին քոլեջում հաստատվել է «Քոլեջի դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և խրախուսման» կարգ: Այս կարգի համաձայն՝ մանկավարժական խորհրդի հերթական նիստերում քննարկվում են դասախոսների խրախուսման վերաբերյալ ուսումնական և մարզչական բաժինների ներկայացրած միջնորդությունները: Մանկավարժական խորհուրդը քննարկում և երաշխավորում է խրախուսման ենթակա թեկնածուներին՝ նրանց թեկնածությունները ներկայացնելով տնօրենի հաստատմանը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ մինչ այժմ խրախուսվել են միայն այն մարզիչները, ովքեր ապահովել են բարձր մարզական արդյունքներ:

Դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը քոլեջում գնահատվում է դասալսումների միջոցով, իսկ մարզիչների դեպքում՝ մարզական բարձր արդյունքների ապահովմամբ: 2021 թվականից քոլեջն ունի «Դասալսումների անցկացման և արդյունքների վերլուծության ընթացակարգ»: Չնայած դասալսումների համար սահմանված հատուկ ժամանակացույց չի նախատեսվում, այնուամենայնիվ, կարևոր է ընդգծել, որ դասալսումները գրանցվում են համապատասխան գրանցամատյաններում, իսկ դրանց արդյունքները վերլուծվում և փաստաթղթավորվում են դասի վերլուծության ձևաթղթում: Վերջինում նշվում են դասավանդման գործընթացի բարելավման համար առաջարկվող քայլերը, օրինակ՝ դերային խաղերի կիրառում, ուսանող-մարզիկների ինքնահսկման աղյուսակների վերլուծություն և այլն:

Դասալսումները կազմակերպվում են փոխտնօրենի կողմից, ինչպես նաև իրականացվում են դասախոսների փոխադարձ դասալսումներ: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ փոխադարձ դասալսումները նպաստել են դասախոսների միջև փորձի փոխանակմանը: Այս մեխանիզմը կարևորվում է քոլեջում դասավանդման լավ փորձերի հայտնաբերման և տարածման համար:

Բացի այդ, դասախոսները վերապատրաստումներից հետո կիսվում են մյուս դասախոսների հետ իրենց ձեռք բերած նոր մեթոդներով և գաղափարներով: Օրինակ՝ ՏՏ վերապատրաստում անցած դասախոսը ներկայացրել է նոր մեթոդներ, որոնք դրականորեն ընդունվել են և կիրառվել նաև այլ դասախոսների կողմից:

Քոլեջում մշակվել և հաստատվել է «Սկսնակ դասախոսների և մարզիչների հետ տարվող աշխատանքների իրականացման» քաղաքականություն: Չնայած այդ փաստաթուղթը դեռևս լիարժեք ներդրված չէ և չի պարունակում հստակ մեխանիզմներ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ սկսնակ դասախոսներին և մարզիչներին աջակցելու մշակույթը գործում է: Փոխտնօրենի կողմից նրանց տրամադրվում է խորհրդատվություններ և աջակցություն աշխատանքային գործընթացի ընթացքում՝ ներառելով դասավանդման մեթոդական ցուցումներ:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն: Դասախոսները, սակայն, պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կազմակերպած մեթոդական վերապատրաստումներին: Վերջին հինգ տարիների ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ի վերապատրաստումներին մասնակցել են 22 դասախոսներ, սակայն մասնագիտական վերապատրաստումները սահմանափակ են: Որոշ դասախոսներ մասնագիտական վերապատրաստումների մասնակցել են Շիրակի պետական համալսարանում:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ նկատվում է երիտասարդացման միտում: Դասախոսական կազմի միջին տարիքը 54 է, իսկ միջին աշխատանքային ստաժը՝ 29 տարի:

Քոլեջում առկա չէ դասախոս թեկնածուների բազա, սակայն քոլեջն օգտվում է իր շրջանավարտների բազայից՝ մարզիչներ ներգրավվելու համար, իսկ դասախոսների ներգրավման համար դիմում է մարզպետարանի կրթության վարչություն:

Քոլեջը համարում է, որ ներկայումս ապահովված է անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ կազմերով, իսկ գործառույթները սահմանված են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով:

Բարձրակարգ մարզիկներին սպասարկելու նպատակով, քոլեջը ՀՀ կառավարության սահմանած կարգով ունի 4 բուժաշխատող:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում դասավանդում են պրակտիկ փորձ ունեցող դասախոսներ և բարձրակարգ մարզիչներ, որոնք իրենց գիտելիքներն ու հմտությունները արդյունավետորեն ներդնում են ուսանողների կրթական և մարզական հաջողությունների մեջ: 2024-2029 թթ. ռազմավարական ծրագրի (ՌԾ) շրջանակում սահմանված նպատակներն ու քայլերը տրամաբանական և նպատակահարմար են՝ ուղղված դասախոսների և մարզիչների մասնագիտական զարգացմանը, նոր մեթոդների կիրառմանը և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Խումբը կարևորում է ՌԾ-ով սահմանված նպատակների իրագործման համար հստակ պլանավորման իրականացումը: Նպատակների հիման վրա մշակված գործողությունների ծրագրերը և դրանց համակարգված իրագործումը կարող են ապահովել դասախոսների և մարզիչների շարունակական զարգացումը՝ նպաստելով քոլեջի կրթական և մարզական ծրագրերի որակի բարձրացմանը:

Դրական է դասալսումների մեխանիզմի առկայությունը և փոխադարձ դասալսումների իրականացումը, որոնք կարևոր են ոչ միայն դասավանդման որակի բարելավման, այլև դասախոսների միջև փորձի փոխանակման համար: Հատկապես

գնահատելի է, որ վերապատրաստում անցած դասախոսները փոխանցում են իրենց ձեռք բերած գիտելիքները գործընկերներին, ինչը խթանում է թիմային համագործակցությունը և գիտելիքի փոխանակումը:

Փորձագիտական խումբը նաև կարևորում է այն փաստը, որ քոլեջի շրջանավարտները ներգրավվում են որպես դասախոսներ և մարզիչներ: Սա խոսում է քոլեջի և նրա շրջանավարտների միջև ամուր կապի մասին և երաշխավորում է հաստատության շարունակական զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿի կողմից կազմակերպված վերապատրաստումներին, ինչը վկայում է, որ քոլեջը կարևորում է դասավանդման որակի բարձրացումը և աշխատակազմի մասնագիտական աճը: Այս տեսանկյունից դրական է Շիրակի պետական համալսարանի հետ համագործակցությունը, որը կարող է նպաստել դասախոսների հմտությունների զարգացմանը և նոր մեթոդների կիրառմանը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում Երևանի օլիմպիական հեթափոխի պետական մարզական քոլեջի հետ համագործակցության խորացումը դասախոսների փորձի փոխանակման տեսակետից, որը կնպաստի մասնագիտական հմտությունների զարգացմանը:

Այնուամենայնիվ, սահմանափակ ֆինանսավորումն ու վերապատրաստումների մասնագիտական ուղղվածության պակասը կարող են նվազեցնել դասախոսների արդյունավետ զարգացումը: Փորձագիտական խումբը կարևորում է վերապատրաստումների թիրախայնության և դրանց իրական արդյունքների պարբերական գնահատման անհրաժեշտությունը՝ ապահովելու, որ այն համապատասխանի քոլեջի ռազմավարական նպատակներին և դասավանդման պահանջներին:

Անդրադառնալով դասախոսական կազմի տարիքային և ստաժային ցուցանիշներին՝ խումբը դրական է գնահատում առկա փորձառությունը: Սակայն երիտասարդ մասնագետների ներգրավման շարունակականությունը կարող է ապահովել նորարարական մոտեցումներ և նպաստել դասախոսական կազմի դինամիկ զարգացմանը: Որպես լավ օրինակ, կարելի է նշել սկսնակ դասախոսների և մարզիչների հետ տարվող աշխատանքների իրականացման մշակույթը: Մենթորության այս մեխանիզմի առկայությունը վկայում է քոլեջի պատրաստակամության մասին՝ աջակցելու նոր մասնագետներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կրթական ծրագիրն իրականացնելու համար ԳՕՀՊՄՔ-ն ունի դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն, առկա են դասախոսների գնահատման որոշակի մեխանիզմներ, գործում է փորձի փոխանկման և սկսնակ դասախոսների աջակցման մշակույթը, առկա է որոշ չափով կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը **բավարարում է** չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Հետազատական աշխատանքների իրականացումը ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է դիտարկվում: Ըստ 2024-2029 թթ.-ի ՌԾ-ի քոլեջը նախատեսում է՝ ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացում: Այս արդյունքին հասնելու համար քոլեջը նախատեսում է մի շարք գործողություններ:

- Մշակել և ներդնել քոլեջի առանձնահատկություններից բխող հետազոտական քաղաքականություն՝ սահմանելով Քոլեջի հետազոտական ուղղությունները, խնդիրները, դրանց լուծման ուղենիշները և գնահատման հիմնական ցուցիչները, քոլեջի ներուժի գնահատման և արտաքին շահակիցներին ներգրավման հիման վրա:
- Ներդնել դասախոսական կազմի ներգրավման և խրախուսման կառուցակարգեր՝ մասնագիտական ոլորտում հետազոտության իրականացման համար (մեթոդական աշխատանքներ, իրենց դասավանդման փորձի ուսումնասիրում և այլն):
- Կատարել համեմատական վերլուծություն նմանատիպ քոլեջների հետ՝ հետազոտության լավագույն միջազգային փորձի ուսումնասիրման և տեղայնացման նպատակով:
- Մշակել և բազմազանեցնել ուսանողներին ներկայացվող վերլուծական, քննադատական, հետազոտական կարողություններ ձևավորող հանձնարարականներ:

Փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզվեց, որ այս ուղղություններով աշխատանքները դեռս չեն անցել իրականացման փուլ:

ՄՈՒՀ-ում հետազոտական աշխատանքը չի հանդիսանում մասնագիտական մոդուլների պարտադիր բաղկացուցիչ մաս, սահմանված չեն նման աշխատանքներ անցկացնելու մեթոդական ցուցումներ, անհատական աշխատանքների ներկայացման-հանձնման կարգ: Առկա չեն անհատական գործնական աշխատանքների հաստատված ցանկ կրթական ծրագրի շրջանակում, որոնք ուղղված լինեն վերլուծական հմտությունների զարգացմանը, հետազոտական աշխատանքների իրականացմանը:

Ըստ 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկաների գրաֆիկների, նախատեսված են՝ ուսումնամեթոդական աշխատանք, մարզումների դասերի դիտում, մասնակի վերլուծություն օրագրում, մարզման դասի վերլուծություն խտության և բեռնվածության ցուցանիշներով: Ուսանողները նախ այս ամենը դիտարկելու հնարավորություն են ստանում՝ ըստ մարզիչի կատարած գործողությունների, ապա նաև՝ մարզիչի ուղղորդմամբ ինքնուրույն իրականացնելու: Փորձագիտական այցից պարզվեց, որ առկա է առանձին նախադեպ, երբ մարզիչը ինքը սեփական փորձի հենքով որոշակի մեթոդաբանություն է մշակել մարզումների ծանրաբեռնվածության սահմանման համար, ինչը արտահայտվում է համապատասխան գրաֆիկի կազմմամբ: Այս մեթոդաբանությամբ վերլուծություն են իրականացնում նաև ուսանողները պրակտիկաների ժամանակ:

Փորձագիտական հանդիպումները և այցի ընթացքում տեղի ունեցած մասնագիտական քննարկումները ցույց տվեցին, որ հետազոտական բաղադրիչը դրված չէ ՄԿԾ-ում, ինչպես նաև քոլեջի կողմից որևէ քաղաքականությամբ սահմանված չէ, թե քոլեջը

ինչպես է պատկերացնում Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակում ուսանողների հետազոտական-վերլուծական գործունեության իրականացումը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հետազոտության տարրեր չեն պարունակում նաև տարբեր մոդուլների շրջանակներում ուսանողներին հանձնարարվող ռեֆերատները: Բացի այդ, նշված աշխատանքներում առկա չեն ուսանողի ինքուրույն վերլուծությունները, եզրակացությունները և աղբյուրների հիշատակումը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության արդյունքում չունեն մշակված ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ մարզիչները մարզիկների հետ միասին միջազգային փորձը ուսումնասիրելու և վերլուծելու անընդհատ գործընթաց են իրականացնում: Ինչը թերևս հստակ փաստաթղթավորված բնույթ չի կրում, սակայն սա մշակույթի վերածված գործընթաց է: Նման բնույթի ուսումնասիրություններ իրականացվում են ինչպես մինչ մրցույթը մրցակիցներին ուսումնասիրելով, այնպես էլ մրցումներից հետո՝ հենց մրցման ամբողջ գործընթացի դիտարկմամբ, թե՛ ուսանող-մարզիկի, և թե՛ մյուս մասնակիցների սխալներն ու առավելությունները վերլուծելով:

Հարկ է նշել, որ քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը 2024-2029 թթ.-ի ՌԾ-ով կարևորել է ուսանողների վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացումը, և գտնում է, որ նախատեսված գործողությունների իրականացումը կարող է հանգեցնել այս ուղղությամբ համապատասխան արդյունքի: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջը նախատեսել է գործողություն՝ ուղղված դասախոսների հետազոտական աշխատանքներում ներգրավմանը, և գտնում է, որ դասախոսների և մարզիչների հետազոտական գործունեության իրականացումը կարևոր է թե՛ ուսանողների մոտ վերլուծական կարողությունների զարգացման, և թե՛ դասախոսների ու մարզիչների մշտական մասնագիտական կատարելագործման տեսանկյուններից: Սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ այս ուղղությամբ դեռևս քայլեր չեն ձեռնարկվել և դեռևս տեսանելի չեն նաև այս ուղղությամբ կատարվող աշխատանքների հստակ կարճաժամկետ պլանավորումներ: Փորձագիտական խումբը կարևորում է այս ուղղությամբ ինչպես համակարգային փաստաթղթերի՝ քաղաքականությունների, ընթացակարգերի մշակման ու ներդրման գործընթացները, այնպես էլ ըստ ուսումնական պլանների՝ ուսանողների հետազոտության իրականացման և վերլուծական կարողությունների զարգացմանն ուղղված հստակ բաղադրիչների նախատեսումը և իրականացումը, ինչը երաշխիքներ կստեղծի ըստ ՈԱՇ 5-րդ մակարդակի համապատասխան արդյունքի ապահովման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է նման բաղադրիչի ներդրումը մասնագիտական մոդուլների շրջանակում, առանձին հանձնարարականների, ինքնուրույն աշխատանքների, ռեֆերատների կամ այլ միջոցներով, քանի որ վերջիններս հնարավորություն կտան համապատասխան կարողությունների աստիճանական ձևավորման և զարգացման համար:

Այս տեսանկյունից փորձագիտական խումբը դրական է համարում, որ պրակտիկայի գործընթացում առկա է որոշ առանձին լավ փորձ, որը սակայն առավել հստակեցնելու և չափելի արդյունքներ ապահովելու կարիք ունի: Միաժամանակ կարևոր է, որ նման գործունեությունը որպես պարտադիր բաղադրիչ արտահայտվի բոլոր ուսանողների և բոլոր

մարզաձևերի պարագայում: Նաև էական կլինի, որ մշակված մարզչական մեթոդաբանությունները վերածվել մեթոդական ուղեցույցների, ձեռնարկների կամ այլ:

Փորձագիտական խումբը նաև կարևորում է տարբեր մրցումների ուսումնասիրման և վերլուծման գործընթացը, որ իրականացվում է մարզիչների և ուսանողների կողմից, սա թույլ է տալիս որոշզկիորեն զարգացնելու ուսանողների վերլուծական կարողությունները: Սակայն այս պարագայում ևս նպատակները, արդյունքները և գործընթացները հստակեցնելու կարիք ունեն: Փորձագիտական խումբը նաև համարում է, որ նման բնույթի աշխատանքները կարող են հետազոտական աշխատանքների հիմք հանդիսանալ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջը դեռևս քայլեր չի ձեռնարկել հետազոտության ուղղությամբ սահմանված ռազմավարական նպատակների և խնդիրների ուղղությամբ, առկա չեն հետազոտության ոլորտի կարճաժամկետ պլաններ, հետազոտական աշխատանքներ իրականացնելու հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, դեռևս հստակ չեն այս ուղղությամբ աշխատանքների նկատմամբ հստակ պահանջներ և ներդրված չեն ուսանողների և դասավանդողների հետազոտական գործունեության ներգրավման և խրախուսման հստակ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՕՀՊՄՔ-ն չի բավարարում 6-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է անբավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի 2024-2029 թթ. ՌԾ-ի խնդիրներից է. Քոլեջի կարիքներին համապատասխան ենթակառույցների և նյութատեխնիկական բազայի արդիականացում:

Այս խնդրի իրականացման համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- ավելացնել նոր լսարաններ՝ տեխնիկապես հագեցված, հեռաուսուցման իրականացման հնարավորություններով (ինտերնետային կապով, համակարգչով, ցուցադրման թվային սարքով, ինտերակտիվ գրատախտակով և անհրաժեշտ այլ պարագաներով),
- պարբերաբար համալրել գրադարանային ֆոնդը, աշխատանքներ իրականացնել գրապահոցի արդիականացման ու թվայնացման ուղղությամբ:
- բարելավել ուսանողներին մատուցվող ծառայությունների կառուցակարգերը: Օգտագործել պետության և մասնավոր հատվածի հնարավորությունները՝ արդիական մարզագույք ձեռք բերելու և միջազգային չափանիշներին համապատասխան մարզման պայմաններ ստեղծելու համար:

Փորձագիտական այցից պարզվեց, որ նշված նյութաեխնիկական ռեսուրսների ձեռբերման համար քոլեջը դեռևս ֆինանսական միջոցներ չունի, իսկ այլընտրաքային ֆինանսական մուտքերի ապահովման տեսակետից դեռևս միայն քննարկումներ են: Մասնավորապես դիտարկում են միջազգային և տեղական տարբեր ծրագրերի մասնակից դառնալու և նախաձեռնողականություն ցուցաբերելու հնարավորությունները:

Քոլեջն ունի 1540.92 ք/մ (որն իր մեջ ներառում է աշխատասենյակներ (215 ք/մ), լսարաններ (1125,72 ք/մ), լաբորատորիաներ (37 ք/մ), գրադարաններ և ընթերցասրահ 26ք/մ), ինչպես նաև ըստ մարզաձևերի մարզադահլիճներ (137.2 ք/մ)) ընդհանուր մակերեսով տարածքով ուսումնական և մարզական կառույցներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջն ունի ճաշարան, թաքստոցներ, մարզական երկու քարաշեն դահլիճ՝ ձյուդոյի և ըմբշամարտի, երկու փայտաշեն դահլիճ՝ ծանրամարտի և բռնցքամարտի, որոնք ապահովված են յուրաքանչյուր մարզաձևին համապատասխան գործիքակազմով, առկա են նաև լոգասենյակներ: Քոլեջն իրականացնում է ընտրած մարզաձև թեթև ատլետիկայի ուղղությամբ, որի համար մարզադահլիճ առկա չէ, սակայն քոլեջը գործնական պարապմունքներն իրականացնում է այլ սպորտդահլիճներում՝ կիրառելով գործընկերների ռեսուրսները:

Քոլեջն ունի 7 դասարան, 8 մասնագիտական լսարան, մեկ առանձին սենյակ, որտեղ պահպանվում են ֆիզիկայի, քիմիայի կենսաբանության որոշ լաբորատոր սարքեր և դիդակտիկ նյութեր:

Փորձագիտական այցից պարզվեց, որ լսարաններում առկա են նաև դիդակտիկ տարբեր նյութեր: Համակարգչային լսարանն ունի 7 համակարգիչ, որոնք տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման կարիք ունեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պրակտիկաների կազմակերպման համար հիմնականում օգտագործում է սեփական ռեսուրսները, սակայն անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայության դեպքում դրանք անցկացվում են մարզա:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դահլիճների մարզական նյութատեխնիկական բազան, համակարգչային տեխնիկան և ճաշարանի սպասքը կարիք ունեն նորացման և արդիականացման: Այնուամենայնիվ, առկա մարզական նյութատեխնիկական բազան, չնայած որոշակի թերություններին, հնարավորություն է տալիս ապահովել մրցակցային մարզական արդյունքներ միջազգային մակարդակում:

Փորձագիտական այցի պարզ դարձավ, որ քոլեջի տարածքում առկա է կիսակառույց շենք, որը նախատեսված է բարձրակարգ դահլիճների կառուցման համար: Սակայն կառուցման ավարտի ժամկետները հստակ սահմանված չեն: Դասախոսական և մարզչական կազմը կարևորում է նյութատեխնիկական բազայի արդիականացումը և կիսակառույց շենքի լիարժեք կառուցումը և կահավորումը՝ ընդգծելով, որ դրա բարելավումը կարող է էականորեն նպաստել ավելի բարձր մարզական և կրթական արդյունքների ապահովմանը:

Քոլեջի գրադարանը ներառում է շուրջ 300 միավոր գրականություն, որոնք հիմնականում դասագրքեր, գրքեր և մասնագիտական որոշ նյութեր են: Գրադարանի գրականությունը հիմնականում հայերեն է, իսկ ռուսերեն և անգլերեն գրքերի քանակը շատ սահմանափակ է: Շահակիցների դիտարկումներով՝ քոլեջում առկա է մասնագիտական գրականության մեծ կարիք: Գրադարանում ընթերցասրահ չկա: Ռազմավարական ծրագրում նախատեսվում է էլեկտրոնային գրադարանի ստեղծում:

Քոլեջում առկա չեն պրոյեկտորներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվել է, որ դասախոսները հաճախ իրենց դասավանդման համար օգտագործում են իրենց անձնական նոթբուքերը՝ տեսանյութեր դիտելու և քննարկումներ կազմակերպելու նպատակով:

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2023 թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի շուրջ 62%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, իսկ շուրջ 35%-

ը՝ կենցաղային և հանրային սննդի նյութերին և այլն: Ըստ ՌԾ նպատակների ֆինանսական պլանավորում առկա չէ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն: 2023 թ. քոլեջի բյուջեի եկամուտների 34 %-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, իսկ շուրջ 66 %-ը՝ սուբսիդիաներից: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջը չի իրականացնում կարճաժամկետ դասընթացներ: Քոլեջը կրթական ծրագրի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային փոստով: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ: Մարզադահլիճներում օդափոխման համակարգը բացակայում է: Քոլեջն ունի բժշկական անձնակազմ, և յուրաքանչյուր դահլիճ սպասարկում է մեկ բուժքույր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ:

2023թ.-ին քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների (18 մասնակից) և ուսանողների (26 մասնակից) շրջանում:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողները, դասախոսները և մարզիչները հիմնականում դրական են գնահատում քոլեջի շենքային պայմանները, ջեռուցման համակարգը, ճաշարանի և մարզադահլիճների սանիտարահիգիենիկ վիճակը: Սակայն նկատվում են մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են քոլեջի նյութատեխնիկական բազային: Ուսանողների և դասախոսների գնահատմամբ՝ կան սահմանափակումներ դասապրոցեսում կիրառվող էլեկտրոնային նյութերի հասանելիության, լսարանների կահավորվածության, տեխնիկական և նյութատեխնիկական ապահովվածության, լաբորատորիաների հագեցվածության, ինչպես նաև գրադարանում ուսումնառության և մասնագիտական զարգացման համար գրականության առկայության առումով:

Հատկապես ուսանողները դժգոհում են մարզադահլիճների կահավորվածության և մարզական գույքի սղության պատճառով: Սակայն հարցումների արդյունքները դեռևս չեն օգտագործվել քոլեջի ռեսուրսների բարելավման ուղղությամբ: Հարկ է նշել, որ քոլեջը ռեսուրսների հետ կապված խնդիրները բացահայտել է քննարկումների կամ ներկայացված զեկուցագրերի միջոցով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը սահմանել է ռազմավարական նպատակ և խնդիրներ՝ ուղղված ռեսուրսների արդիականացմանն ու զարգացմանը: Միաժամանակ ռեսուրսների դիտարկման արդյունքում նկատելի է այս ուղղությամբ անընդհատ գործընթացներ՝ ապահովելու անհրաժեշտ ռեսուրսներ և բարեկարգ միջավայր՝ ըստ ունեցած հնարավորությունների: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ռազմավարական այս կարևոր պլանավորումը իրականացման տեսանկյունից երաշխիքներ ունենալու կարևոր նախապայման է ֆինանսական անհրաժեշտ հնարավորությունների առկայությունը, մինչդեռ քոլեջը

բավարար ֆինանսական միջոցներ չունի: Ուստի կարևոր կլինի այլընտրանքային ֆինանսական մուտքերի ապահովումն ու բազմազանեցումը: Կարևոր է, որ քոլեջը սկսել է այս մասին քննարկումներն ու հնարավորությունների դիտարկումը, սակայն առավել առարկայական քայլերի կարիք կա:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը կարողացել է ապահովել անհրաժեշտ նյութական ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս մարզիչներին, կիրառելով իրենց մասնագիտական, մարզչական փորձառությունն ու հմտությունները, ապահովել միջազգային մրցակցային արդյունքներ: Փորձագիտական խումբը նաև գնահատելի է համարում, որ դասավանդողները, չսահմանափակվելով եղած ռեսուրսներով, կիրառում են սեփական տեխնիկական միջոցները՝ իրենց դասապրոցեսի առավել արդյունավետ իրականացման և փոխգործուն մեթոդների գործածման համար:

Սակայն փորձագիտական խումբը նշում է, որ ռեսուրսները արդիականացման և զարգացման կարիք ունեն՝ ուղղված լսարանային առավել արդյունավետ գործընթացի կազմակերպմանը, համակարգչային և լաբորատոր դասընթացների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև մարզչական հմուտ մեթոդաբանությամբ առավել լավ արդյունք գրանցելու և ուսանողների համար առավել գրավիչ պայմաններ ստեղծելու համար: Այս ամենը կարող է նպաստել ձեռքբերումների ցուցանիշների առավել բարելավման: Կարևոր կլինի նաև կիսաշեն շենքի վերջնական կառուցումը:

ՄՈՒՀ-ն իր նյութատեխնիկական բազան արդյունավետորեն կիրառում են պրակտիկաների կազմակերպման համար, սա նաև թույլ է տալիս ուսանողներին ուսումնական գործընթացին զուգահեռ անընդհատ պրակտիկ գործունեության մեջ լինել՝ նույնիսկ սահմանված պրակտիկաների ժամկետներից առավել, ինչը աշխատանքի վրա հենված ուսուցման մոտեցումների գործածում է, և սա կարևորում է փորձագիտական խումբը: Միաժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը կարողանում է արդյունավետորեն համագործակցել գործընկերների հետ և կիրառել ռեսուրսները կրթական արդյունքների ապահովման համար, այն պարագայում, երբ տվյալ մարզաձևի համար համապատասխան ռեսուրսներ առկա չեն քոլեջում: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը նաև կարևորում է գործատուների հետ համագործակցության շրջանակի ընդլայնում այն մարզաձևերի դեպքում, երբ համապատասխան ռեսուրսներն առկա են քոլեջում, քանի որ սա կարող է հնարավորություն ստեղծել արտաքին շահակիցներին ներգրավելու կրթական գործընթացում, ինչպես նաև նոր ռեսուրսների կիրառման և այլ փորձի ուսումնասիրման և կիրառման համար: Սա նաև հնարավորություն կտա արտաքին գնահատման գործընթաց ունենալու:

Քոլեջն ունի արտաքին և ներքին շահակիցների հետ համապատասխան փաստաթղթաշրջանառության ապահովման մեխանիզմներ: Չնայած էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ ներդրված չէ, սակայն, փոքր կառույց հանդիսանալով, կարողանում է ապահովել փաստաթղթաշրջանառության գործընթաց: Թերևս նման համակարգի ներդրումը կարող է նպաստել ժամանակի պահամջներին համապատասխան առավել արդյունավետ գործընթաց:

Քոլեջը ունի անվտանգ միջավար ապահովելու հիմնական միջոցները և այս ուղղությամբ ձեռնարկում է համապատասխան միջոցներ:

Քոլեջը որոշակիորեն համալրում է գրադարանային ֆոնդը, սակայն փորձագիտական խումբը նշում է մասնագիտական գրականությամբ համալրման անհրաժեշտությունը, ինչը

կարևորում են նաև շահակիցները: Կարևոր կլինի նաև էլեկտրոնային գրադարանի առկայությունը, ինչը քոլեջի ռազմավարական խնդիր է:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ առանձին քննարկումները և աշխատակիցների պահանջագրերը հիմք են հանդիսանում որոշ ռեսուրսների ձեռքբերման համար: Գնահատելի է նաև, որ քոլեջը մշակել և ներդրել է այս ուղղությամբ ուսումնասիրություններ իրականացնելու որոշ մեխանիզմ, և կարևոր կլինի, որ հետագայում քոլեջը առավել ընդհանուր ուսումնասիրություններ և վերլուծություններ իրականացնի այս ուղղությամբ խնդիրների բացահայտմանն և առաջնահերթությունների տարանջատմանն ուղղված: Փորձագիտական խումբը գտնում է, որ ռեսուրսային խնդիրների գնահատման և առաջնահերթությունների առանձնացման տեսանկյունից կարևոր է նաև կրթական ծրագրի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկի իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՕՀՊՄՔ-ն ունի ռեսուրսային անհրաժեշտ հիմնական բազա, ապահովել է անվտանգ միջավայր, փորձում է ըստ հնարավորության արդիականացնել ռեսուրսները, միաժամանակ առավելագույնս արդյունավետորեն կիրառում է ռեսուրսները, ունի ռեսուրսների կարիքների վերհանման մեխանիզմներ և մշակել է ռեսուրսների գնահատման մեխանիզմներ, առանձին մարզաձևերի ուղղությամբ ռեսուրսների բացակայության պարագայում արդյունավետորեն համագործակցում է գործընկերների հետ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՕՀՊՄՔ-ը **բավարարում** է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում հաշվետվողականության համակարգը դեռևս նոր է ներդրվում, և դրա աստիճանակարգումը հստակ ձևավորված չէ: Առկա է որոշակի հաշվետվողականություն դասախոսների և մարզիչների մակարդակում, ինչպես նաև որոշ պատասխանատուների՝ օրինակ փոխտնօրեններ, կարիերայի պատասխանատու:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տնօրենի տարեկան հաշվետվությունները պարունակում են սահմանափակ տեղեկատվություն և չունեն վերլուծական բաղադրիչ: Տնօրենը հաշվետու է կառավարման խորհրդին՝ ներկայացնելով ֆինանսական տվյալներ և կատարված աշխատանքների մասին հաշվետվություն: Սակայն այդ հաշվետվությունները չեն ներառում քոլեջի գործունեության բոլոր ոլորտները կամ անդրադառնում հիմնական հիմնախնդիրներին: Քոլեջը նաև հաշվետվություններ է ներկայացնում լիազոր մարմնին:

Քոլեջը ներկայումս չի հրապարակում իր ընթացակարգերն ու պաշտոնական փաստաթղթերը: ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում տարածվում է լրատվամիջոցներով: Վերջերս քոլեջն ստեղծել է իր ֆեյսբուքյան էջը, որը դեռ գտնվում է զարգացման փուլում: Այն նախատեսված է հատկապես մարզիկների հաջողությունների մասին տեղեկատվության տարածման համար:

Քոլեջը դեռևս չունի պաշտոնական կայք, սակայն դրա մշակումը ներառված է ռազմավարական ծրագրում և դիտարկվում է որպես առաջնահերթություն: Այնուամենայնիվ, կայքի ստեղծման համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որոնք առայժմ չեն հատկացվել, իսկ ներքին մարդկային ռեսուրսներով դրա իրականացումը քոլեջը ներկայումս անհնար է համարում:

Քոլեջում կազմակերպվող միջոցառումները հանրայնացվում են մամուլում և հեռուստատեսային հաղորդաշարերում՝ քոլեջի գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով: Մարզական ձեռքբերումների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է նաև քոլեջի ներսում՝ մարզիկների հաջողությունների մասին տեղեկատվական վահանակների միջոցով:

Հասարակության հետ հետադարձ կապի ապահովման հստակ գործող մեխանիզմներ դեռևս առկա չեն, սակայն քոլեջի նորաստեղծ ֆեյսբուքյան էջը արդեն իսկ ծառայում է այդ խնդրի լուծմանը:

Անդրադառնալով հասարակության հանդեպ պատասխանատվությանը՝ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջն իրականացնում է մի շարք նախաձեռնություններ, որոնք նպաստում են ինչպես հանրության, այնպես էլ մարզական ոլորտի զարգացմանը: Դրանց թվում են՝

- Հաջողության հասած մարզիկների հետ աշակերտների հանդիպումների կազմակերպումը, ինչը խթանում է երիտասարդների սպորտով զբաղվելուն:
- Հասարակական հիմունքներով փոքր տարիքի երեխաների հետ մարզական պարապմունքների իրականացումը:
- Մարզական հաջողություններ ունեցող ուսանողների և շրջանավարտների մասնակցությամբ հասարակության լայն խմբերի հետ հանդիպումների կազմակերպումը:
- Արտերկրից ժամանած մարզիկների համար մշակութային միջոցառումների կազմակերպումը:

Քոլեջի մարզիկները պարբերաբար մասնակցում են միջազգային միջոցառումների, այդ թվում՝ աշխարհի օլիմպիական խաղեր, եվրոպայի առաջնություններ և այլն՝ գրանցելով հաջողություններ:

Բացի այդ, ուսանողները ներգրավված են եղել նաև պատերազմի ընթացքում զինվորների համար անհրաժեշտ պարագաների հավաքագրման գործընթացում՝ ցուցաբերելով իրենց աջակցությունն ու սոցիալական պատասխանատվությունը:

Դատողություն: Քոլեջում հաշվետվողականության համակարգը դեռևս գտնվում է ներդրման նախնական փուլում, ուստի դրա աստիճանակարգումը դեռ հստակ ձևավորված չէ: Այնուամենայնիվ, այն փաստը, որ հաշվետվողականության որոշակի և գործող մեխանիզմներ արդեն առկա են դասախոսների և մարզիչների մակարդակում, վկայում է, որ համակարգը զարգացնելու և ամբողջականացնելու համար գոյություն ունեն անհրաժեշտ նախադրյալներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվողականության առկա փորձառությունն անհրաժեշտ է վերլուծել և տարածել մյուս ստորաբաժանումներում, ինչպես նաև ներդնել միասնական ձևաչափ, որը կապահովի համակարգված տվյալների դուրսբերմանը: Իսկ տնօրենի տարեկան հաշվետվությունները պարունակում են սահմանափակ տեղեկատվություն՝ առանց վերլուծական բաղադրիչի, որը կարող է խոչընդոտել խնդիրների վերհանմանը: Տնօրենի հաշվետվությունները չեն արտացոլում Քոլեջի գործունեության բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրները, իսկ բովանդակային

առումով փոխկապակցված չեն ՌԾ-ում սահմանված նպատակներին, դրանցում անդրադարձ չի կատարվում նախորդ տարիների հաշվետվություններից վերհանված խնդրահարույց կետերին, իսկ երբեմն էլ հաշվետվությունները կրում են ձևական բնույթ, ինչն էլ հանգեցնում է թերացումների: Պետք է փաստել, որ Քոլեջում գործող հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ չի իրականացվել:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ Քոլեջը ձեռնարկում է քայլեր իր մարզական հաջողությունների հանրայնացման ուղղությամբ, մասնավորապես՝ տեղեկատվության տարածման նպատակով գործարկել է Ֆեյսբուքյան էջ, որն այժմ զարգացման փուլում է: Սակայն, պաշտոնական կայքի բացակայությունը սահմանափակում է տեղեկատվության ամբողջական և համակարգված հասանելիությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարող է կարևոր դեր խաղալ տարածաշրջանում մասնագիտական գիտելիքի փոխանցման գործում: Դա կարելի է իրականացնել կարճաժամկետ ծրագրերի միջոցով, որտեղ ներկայացված կլինեն առաջատար մարզիչների փորձը և լավագույն մարզիկների հաջողությունները: Նման նախաձեռնությունները ոչ միայն կբարձրացնեն քոլեջի ճանաչելիությունը, այլև կնպաստեն մարզական ոլորտի զարգացմանը:

Խումբը քոլեջին առաջարկում է վերլուծել իր առկա հնարավորությունները՝ որոշելու կարճաժամկետ ծրագրերի հնարավոր ուղղությունները: Այս աշխատանքը կարելի է կատարել համագործակցելով մարզպետարանի կրթության ստորաբաժանման հետ և քաղաքապետարանի հետ՝ ներգրավվելով քաղաքային ծրագրերում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի նախաձեռնությունները հասարակության առջև պատասխանատվության ապահովման ուղղությամբ: Հաջողության հասած մարզիկների հետ աշակերտների հանդիպումների կազմակերպումը, փոքր տարիքի երեխաների համար հասարակական հիմունքներով պարապմունքների իրականացումը, ինչպես նաև մարզական հաջողություններ ունեցող ուսանողների և շրջանավարտների մասնակցությամբ հասարակության լայն խմբերի հետ հանդիպումներն էական դեր են խաղում սպորտի հանրայնացման և երիտասարդների ներգրավվածության խթանման գործում: Արտերկրի մարզիկների համար կազմակերպվող մշակութային միջոցառումները ոչ միայն նպաստում են մշակութային փոխանակմանը, այլև ամրապնդում են միջազգային կապերը:

Քոլեջի մարզիկների մասնակցությունը միջազգային միջոցառումներին և աշխարհի օլիմպիական խաղերին կարևոր է ՀՀ միջազգային տեսանելիության բարձրացման, ինչպես նաև հայրենասիրական դաստիարակության տեսանկյունից: Այս գործունեությունը վկայում է քոլեջի սոցիալական պատասխանատվության մշակույթի ձևավորման և դրա կիրառման ուղղությամբ ցուցաբերվող հետևողականության մասին:

Փորձագիտական խումբը կատարված ուսումնասիրությունների հիման վրա դիտարկում է քոլեջի՝ որպես առողջ ապրելակերպի մշակույթի տարածման միջոցառումներ իրականացնող դերակատար տարածաշրջանում: Սա կարևոր կլինի արտաքին շահակիցների կարիքների տեսանկյունից, բացի այն կարող է հնարավորություն ընձեռել ֆինանսական մուտքերի բազմազանեցման համար, մասնավորաբար կարճաժամկետ դասընթացների իրականացմամբ, դրամաշնորհներում ներգրավմամբ կամ այլ միջոցներով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում կարևորվում է հաշվետվողականության համակարգի ներդնումը և առկա է որոշ գործող բաղադրիչ, Քոլեջի գործունեության թափանցիկության և հասարակությանը հասանելիության համար կիրառվում են տարբեր հարթակներ (լրատվամիջոցներ, մամուլ, հեռուստաընկերությունների տարբեր հաղորդաշարեր), Քոլեջի կողմից հասարակության առջև պատասխանատվությունն իրականացվում է մի շարք միջոցառումների տեսքով, առկա է հասարակության հետ հետադարձ կապի ապահովման որոշակի մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի- պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Համաձայն 2024-2029թթ. ռազմավարական ծրագրի, քոլեջը նախատեսում է զարգացնել համագործակցությունը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում և փնտրում է դրա համար անհրաժեշտ ուղիներ: Մասնավորապես, նախատեսվում է մշակել և ներդնել արտաքին կապերի հաստատման ու միջազգայնացման քաղաքականություն: Ներկայումս քոլեջը չունի միջազգային համագործակցության պայմանագրեր, սակայն առկա են համագործակցություններ և համագործակցության հնարավորություններ:

ՌԾ Նպատակ 4-ի շրջանակում նախատեսվում է՝

- Հաստատել կապեր օտարերկրյա գործընկերների հետ, կազմակերպել սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ և փորձի փոխանակում՝ ներառելով նաև Սփյուռքի հետ համագործակցություն:
- Բարելավել ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացությունը՝ արտերկրյա փորձի կիրառման և փորձի փոխանակման հնարավորությունների ընդլայնման նպատակով:
- Ստեղծել քոլեջի կայք և սոցիալական մեդիա հարթակներ (Facebook, Instagram), որոնք կխթանեն քոլեջի տեսանելիությունն ու տեղեկատվության հասանելիությունը:
- Պարբերաբար անցկացնել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ քոլեջի գործունեության բարելավման նպատակով:
- Զարգացնել գործընկերային կապերը տեղական և միջազգային ուսումնական հաստատությունների հետ՝ կրթական ծրագրերի կատարելագործման, ինչպես նաև ուսանողների, դասախոսների և մարզիչների փորձի փոխանակման նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը քայլեր է ձեռնարկում միջազգային դրամաշնորհներին դիմելու հետ կապված, սակայն հստակ պլանները այս տեսակետից դեռևս բացակայում են: Արտաքին կապերի հաստատման համար քոլեջում պատասխանատու են տնօրենը, փոխտնօրենները և կարիերայի պատասխանատուն: Փորձագիտական այցից պարզվեց, որ միջազգային կապերի հաստատման և

դրամաշնորհներում ներգրավման տեսանկյունից քոլեջը կարողությունների զարգացման անհրաժեշտություն է տեսնում:

Հարկ է նշել, որ արտաքին կապերն ու միջազգայնացումը խրախուսող, խթանող մեխանիզմներ դեռևս առկա չեն: Սակայն միջազգային կամ ազգային տարբեր մրցումներին մասնակցությունը թե՛ մարզիկների և թե մարզիչների նպատակների կիզակետում է: Եվ այս նպատակի համար երկուստեք առավելագույնս մոտիվացված են և կատարում են իրենցից կախված առավելագույնը: Փորձագիտական այցից պարզվեց, որ այս հանգամանքը նաև հիմք է հանդիսանում միջազգային փորձի ուսումնասիրման համար:

Միևնույն ժամանակ փորձագիտական այցը ցույց տվեց, որ Քոլեջն ունի համագործակցությունների լայն շրջանակ: Քոլեջի ուսանողները պարբերաբար մասնակցում են միջազգային մրցումների Վրաստանում, Ռուսաստանում, Չեխիայում և Պարսկաստանում: Բացի այդ, քոլեջը համագործակցում է տարածաշրջանի տարբեր մարզադպրոցների, հանրակրթական դպրոցների և այլ կազմակերպությունների հետ՝ համատեղ մարզումներ կազմակերպելու նպատակով:

Քոլեջը հաջողությամբ համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ներառյալ տարածքի բարեկարգման և թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվության տարածման ուղղությամբ:

Նշանակալի է նաև համագործակցությունը տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների, Ազգային Օլիմպիական կոմիտեի և Երևանի Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հետ՝ փորձի փոխանակման նպատակով: Քոլեջը համագործակցում է այն մարզական կառույցների հետ, որոնք ունեն համապատասխան նյութատեխնիկական բազա՝ ուսանողների պրակտիկաների կազմակերպման և որակյալ մարզումների իրականացման համար:

Փորձի փոխանակման շրջանակներում քոլեջը համագործակցում է ինչպես միջազգային այնպես էլ տեղական մարզական կառույցների հետ, բացի այդ մարզիչները և մարզիկները ազգային ու միջազգային փորձի ուսումնասիրություն են իրականացնում տեսանյութերի դիտման և վերլուծության միջոցով:

Քոլեջը սերտ կապեր է հաստատել Շիրակի պետական համալսարանի (ՇՊՀ) և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ հետ՝ շարունակական կրթության շրջանակում:

ՄՈՒՀ-ը ձեռնարկել է տեղական և միջազգային դրամաշնորհների հնարավորությունների ուսումնասիրություն՝ ֆինանսական մուտքերը բազմազանեցնելու և կարողությունները զարգացնելու համար:

Անդրադառնալով օտար լեզուների իմացությանը, հարկ է նշել, որ քոլեջի ներքին շահակիցները հիմանականում տիրապետում են ռուսերենին, իսկ անգլերենի և այլ օտար լեզուների իմացություն մակարդակը դեռևս բավարար չէ և դրանց զարգացման համար քայլեր նախատեսված չեն, չնայած որ շահակիցները տեսնում են դրա անհրաժեշտությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը ազգային և միջազգային համագործակցության ուղղությամբ: Ուսանողների պարբերական մասնակցությունը տարածաշրջանային և միջազգային մրցումներին, մարզիչների ու մարզիկների կողմից ազգային և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական ֆեդերացիաների և այլ ուսումնական հաստատությունների հետ կապերը վկայում են բազմաբովանդակ և կայուն համագործակցության մշակույթի ձևավորման մասին:

Փորձագիտական խումբը նաև դրական է համարում ուսանողների և մարզիչների մոտիվացվածությունը՝ մասնակցելու միջազգային և ազգային մրցումների, սա յուրօրինակ խթանման և խրախուսման մեխանիզմ է հանդիսանում արտաքին կապերի հաստատման և միջազգային փորձի ուսումնասիրման համար և նպաստում է քոլեջում ուսումնական և մարզչական գործընթացի զարգացմանը: Սակայն փորձագիտական խումբը կարևորում է նաև այս ուղղությամբ խթանման և խրախուսման այլ մեխանիզմների ներդնումը, որը կարող է նպաստել արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ արտաքին և միջազգային կապերի հաստատման համար առկա են պատասխանատուներ, սակայն կարևոր կլինի ինչպես պատասխանատվությունների առավել հստակեցումը, այնպես էլ կարողությունների զարգացման (լեզվահմացություն, դրամաշնորներ ներկայացնելու կամ այլ) ուղղությամբ քայլերի ձեռնարկումը, ինչը կնպաստի քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման ուղղություններով զարգացումների ապահովմանը:

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջը կարող է մշակել հստակ քաղաքականություն և գործողությունների ծրագիր, որտեղ սահմանված կլինեն հիմնական նպատակները, համագործակցության մեխանիզմները և ռեսուրսների բաշխման եղանակները: Սա կապահովի, որ առկա համագործակցությունները լինեն շարունակական և ուղղված կարևոր առաջնահերթություններին: Փորձագիտական խումբը նաև կարևորում է բոլոր համագործակցությունները ինստիուցիոնալացման հանգամանքը, ինչը կնպաստի համագործակցությունների շարաունակականության երաշխիքների ստեղծմանը: Փորձագիտական խումբը նաև կարևորում է, որ քոլեջը մշտապես դիտարկի համագործակցության շրջանակի ընդլայնման հնարավորությունները, գործատուների հետ առավել սերտ համագործակցությունների հաստատումը, ինչը կարող է ընդլայնել շրջանավարտների՝ աշխատանքով ապահովման հնարավորությունները, գործատուների ներգրավմանը ուսումնական և որակի ապահովման գործընթացներում նա այլն:

Ներկայումս օտար լեզվերի իմացության բարելավումը նշվում է որպես զարգացման առաջնահերթություն, ինչը կնպաստի համագործակցության ավելի լայն հնարավորություններին և արտերկրյա փորձի ներմուծմանը: Ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացումն առաջիկայում կուժեղացնի միջազգային կապերը և կխթանի գիտելիքի ու փորձի փոխանակումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը ձևավորել է բազմակողմանի համագործակցություն ինչպես տեղական, այնպես էլ օտարերկյա ոլորտային գործընկերների հետ, ապահովում է ուսանողների պարբերական մասնակցությունը միջազգային մրցումներին և փորձի փոխանակմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է բավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի դեկտեմբերից: Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազա: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս նպատակով քոլեջի ստորաբաժանումների կողմից մշակվել է «Որակի ապհովման բաժնի կանոնադրություն», որը սահմանում է որակի ապահովման բաժնի գործառույթներն ու կառավարումը: Մշակվել է «Որակի ներքին ապահովման համակարգը և քաղաքականությունը», որի համաձայն՝ ՈԱ համակարգի առաքելությունն է Քոլեջում որակի ապահովման (այսուհետ ՈԱ) մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումը, ինչպես նաև որակի կառավարման և բարելավման գործընթացներում շահակիցների դերակատարության բարձրացումը: Քոլեջը ՈԱ մեխանիզմների մշակման գործընթացում ուսումնասիրել է տեղական այլ քոլեջների փաստաթղթային հենքը՝ տեղայնացնելով դրանք քոլեջում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում որակի պատասխանատուի հաստիք առկա չէ: Որակի ապահովման աշխատանքները համակարգվում են 2023 թվականին ստեղծված որակի ապահովման հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկված են վարչական աշխատակիցներ, դասախոսներ և մեկ ուսանող: Սակայն հանձնաժողովի աշխատանքներում ուսանողի մասնակցությունը տեսանելի չէր: Հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով՝ առանց հատկացված նյութական ռեսուրսների: Բացի այդ, հանձնաժողովն այս պահին չի առաջնորդվում հստակ մշակված աշխատանքային պլանով: Աշխատանքները հիմնականում կենտրոնացել են ինքնավերլուծության, ինչպես նաև հարցումներ իրականացման վրա:

Քոլեջում մշակվել է շահակիցների շրջանում հարցումներ անցկացնելու ընթացակարգ, որի շրջանակում մեկ անգամ իրականացվել են հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում: Հարցումները նպատակ ունեն գնահատել շահակիցների բավարարվածությունը քոլեջի գործունեությունից, ուսումնառության և մարզումների գործընթացից, ինչպես նաև ռեսուրսներից: Հարցումն իրականացվել է առցանց՝ Google Forms հարթակի միջոցով: Ներկայումս հարցումները դեռ գտնվում են փորձարկման փուլում, սակայն քոլեջը նախատեսում է ընդլայնել հարցումների մասնակիցների շրջանակը:

Հարցումներ են անցկացվել նաև շրջանավարտների շրջանում՝ կիրառելով հարցաթերթ, որը ներառում է փակ և բաց հարցեր: Բաց հարցերը հիմնականում նպատակ ունեն բացահայտելու խնդիրներն ու կարիքները: Սակայն հարցաթերթում ընդգրկված են նաև այնպիսի հարցեր, որոնք առնչվում են ծառայություններին կամ ռեսուրսներին, որոնք քոլեջը չունի: Օրինակ, հարցաթերթում գնահատվել է էլեկտրոնային գրադարանի օգտագործումը, մինչդեռ քոլեջը դեռևս նման գրադարան չունի:

Հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ քոլեջը բացահայտել է մի շարք խնդիրներ, որոնք նախկինում ևս նկատվել էին, սակայն դրանց լուծումը պահանջում է ֆինանսական ներդրումներ, որոնք ներկայումս անհասանելի են քոլեջի համար: Հարցումների արդյունքները քննարկվել են ղեկավար կազմի հետ, սակայն շահակիցների լայն շրջանակ իրազեկ չի եղել այդ վերլուծության արդյունքների մասին: Այս համատեքստում,

կարիերայի պատասխանատուն առաջարկել է ստեղծել «Կարիերայի անկյուն», և այս նախաձեռնության համար ղեկավար կազմը տրամադրել է որոշակի նյութական պարագաներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվել է նաև, որ քոլեջը չի կազմակերպում ֆոկուս խմբային ֆորմալ կամ ոչ ֆորմալ հանդիպումներ:

Այցի ընթացքում պարզվեց, որ որակի ապահովման գործող մեխանիզմ արդեն իսկ կիրառվում է մարզչական մակարդակում: Մարզիչները հետևում են ՊԻԳԲ (պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում) շրջափուլին. նրանք պլանավորում են մարզումները, իրականացնում դրանք, ապահովում հետադարձ կապ, իսկ ձեռքբերված մարզական արդյունքների հիման վրա կատարում են գնահատում: Վերլուծելով արդյունքները և վեր հանելով խնդիրները՝ մարզիչները բարելավում են մարզումների գործընթացը՝ ապահովելով դրանց շարունակական զարգացում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ներքին շահակիցները ներգրավված են եղել ինքնավերլուծության (ԻՎ) գործընթացում՝ մասնակցելով համապատասխան հանձնաժողովի աշխատանքներին և կատարելով աշխատանքներ առանձին չափանիշների շրջանակներում: ԻՎ խումբն իրականացրել է իր գործունեությունը համագործակցության սկզբունքով: ԻՎ գործընթացը դարձել է հիմք մի շարք կարևոր փաստաթղթերի, այդ թվում՝ ռազմավարական ծրագրի մշակման և ներդրման համար: Այնուամենայնիվ, կազմված ինքնավերլուծության արդյունքները չեն տարածվել շահակիցների ամբողջական շրջանակի վրա, իսկ արտաքին շահակիցները չեն ներգրավվել ԻՎ գործընթացում:

Քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կից փաստաթղթերն ու տվյալները բավարար չէին քոլեջում իրականացվող գործընթացների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար: Ինքնավերլուծությունն ունի սակավ վերլուծական բաղադրիչ: Բացի այդ, փորձագիտական խումբը այցի ընթացքում հայտնաբերեց մի շարք ուժեղ կողմեր, որոնք չէին արտացոլվել ինքնավերլուծության մեջ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջը ձեռնարկել է առաջին քայլերը որակի ապահովման ներքին համակարգի ձևավորման ուղղությամբ (որոշ փաստաթղթերի մշակման, հանձնաժողովի ստեղծման տեսքով), սակայն որակի ապահովումը դեռևս ձևավորված չէ որպես ամբողջական համակարգ: Որակի ապահովման հանձնաժողովը գործում է սահմանափակ ռեսուրսներով, չունի հստակ աշխատանքային պլան, իսկ որակի պատասխանատուի հաստիք դռևս ներդրված չէ, ինչի հետևանքով որակի կառավարման մշակույթը բավականին սկզբնական փուլում է:

Չնայած քոլեջը մշակել է հարցումներ անցկացնելու ընթացակարգ և անցկացնում է որոշ հարցումներ, դրանք դեռևս կրում են փորձարկման փուլում են և չեն վերլուծվում լիարժեքորեն: Միևնույն ժամանակ, հարցաթերթերում երբեմն ներառվում են ծառայությունների կամ ռեսուրսների մասին հարցեր, որոնք քոլեջը չունի, ինչի հետևանքով հարցումների արդյունքները կարող են մասամբ իրական պատկեր չարտացոլել:

Քոլեջում վերլուծական հենքով իրականացվող գործողությունները դեռևս հատվածային են: Ինքնավերլուծությունը, թեև հիմք է դարձել ռազմավարական ծրագրի մշակման համար, սակայն չի ներառել շահակիցների ամբողջական շրջանակը և չունի վերլուծական խորություն: Դրա հետևանքով, մի շարք կարևոր եզրակացություններ և ուժեղ կողմեր չեն արտացոլվել փաստաթղթերում:

ՊԻԳԲ (PDCA) շրջափուլի կիրառումը մարզչական մակարդակում վկայում է, որ առկա է որոշակի որակի ապահովման ներուժ, բայց այն դեռևս չի ընդլայնվել քոլեջի մյուս ստորաբաժանումներում: Այս ամենն ընդգծում է, որ եթե քոլեջը ներդնի մարզչական լավ փորձի փաստաթղթավորում և տարածի մյուս ոլորտներում, կարող է ձևավորվել ավելի ամբողջական և համակողմանի որակի ներքին ապահովման համակարգ:

Չնայած որակի ապահովման համակարգը դեռևս նախնական մակարդակում է և վերլուծական գործունեությունը մասամբ է իրականացվում, առկա քայլերը դրական հիմք են նախանշում այդ համակարգը հետագայում զարգացնելու համար: Այնուհանդերձ, որոշ կարևոր գործընթացներ մնում են ոչ լիարժեք համակարգված, իսկ որոշումները հաճախ կայացվում են սահմանափակ տեղեկատվության հիման վրա, ինչը ստեղծում է որոշակի ռիսկեր թե՛ ռազմավարական զարգացման, թե՛ հիմնական կրթական ու մարզական գործընթացների որակի շարունակական բարելավման ապահովման տեսանկյունից: Այս առումով կարևոր է որակի պատասխանատուի հաստիքի համալրումը և աշխատանքների համակարգված իրականացումը, որն էլ կնպաստի որակի մշակույթի ստեղծմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՕՀՊՄՔ-ում որակի ապահովման համակարգը դեռևս նախնական փուլում է և չունի անհրաժեշտ ինստիտուցիոնալ հիմքեր (որակի պատասխանատուի հաստիք, հանձնաժողովի կայուն ռեսուրսներ, հստակ աշխատանքային պլան), հարցումների և վերլուծական գործունեության գործընթացները կրում են հատվածային բնույթ և չեն ապահովում խնդրահարույց հարցերի լուծման լիարժեք մեխանիզմ, ինքնավերլուծության արդյունքները չեն ներառել շահակիցների ամբողջ շրջանակը և չունեն բավարար վերլուծական խորություն, ՊԻԳԲ (PDCA) շրջափուլը կիրառվում է միայն մարզչական մակարդակում, առանց ընդլայնման այլ ստորաբաժանումներում, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

_____

Փորձագիտական խմբի ղեկավար
Արմենուհի Սարգսյան
07.02.2025

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Արմենուհի Սարգսյան՝** 2006 թ.-ին ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի դոցենտ: 2012-2016 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017-2018 թթ.-ին եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018-2023 թթ.-ին՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն: Մի շարք գիտական նախագծերում հանդիսացել և հանդիսանում է ավագ գիտական աշխատող, առաջատար գիտական աշխատող կամ ղեկավար: 2017 և 2019 թթ.-ին դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus+ շարժունության ծրագրի շրջանակներում: 2018-2023 թթ.-ին ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 2023 թ.-ից FAST-ի ավագ (senior) գիտաշխատող: 1 ուսումնամեթոդական ձեռնարկի և 80-ից ավել գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:
2. **Արաքս Աղաջանյան՝** 2012 թ.-ին ավարտել է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանը: 2012-2022 թթ.-ին աշխատել է Ստեփանավանի Հովհ. Թումանյանի անվան ավագ դպրոցում որպես ֆիզիկայի ուսուցչուհի: 2020 թ.-ից առ այսօր դասավանդում է Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջում՝ որպես ֆիզիկայի դասախոս: 2022 թ.-ից մինչ այսօր զբաղեցնում է քոլեջի կրթության որակի ապահովման պատասխանատուի պաշտոնը: 2024 թ.-ի հոկտեմբերի 4-ից 12-ը եղել է Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջի տնօրենի լիազորությունների ժամանակավոր պաշտոնակատար: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ ներառյալ 2015 թ.-ին «Ներառական կրթության ներդրումը հանրակրթական հաստատություններում», 2017 թ.-ին՝ որպես սեմինարավար «Հայաստանի խորհրդանիշները» խորագրով ծրագրում, ինչպես նաև 2020 թ.-ին աշխատել է «Այբ» կրթական համալիրում որպես ֆիզիկայի լաբորանտ: Անցել է մասնագիտական պարտադիր վերապատրաստումներ և 2020-2025 թթ.-ի համար ստացել հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր:
3. **Էլեն Դավթյան՝** 2014 թվականին ավարտել է ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետը՝ անգլերեն լեզու գրականություն մասնագիտությամբ, իսկ 2016 թվականին նույն ֆակուլտետի մագիստրատուրան: 2005-2007 թվականների աշխատել է «Մխիթար Գոշ» հա,ալսարանում որպես դասախոս, իսկ 2001 թվականից մինչ այսօր աշխատում է Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում, և զբաղեցնում է ուսումնական գծով տնօրենի տեղակալի պաշտոնը:

4. **Ինգա Հարությունյան՝** 2021-2024թթ. սովորել է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջում «Դեղագործություն» մասնագիտությամբ։ 2023-2024թթ. մասնակցել է ՈԱԱԿ Ուսանողության ձայն նախաձեռնության կողմից կազմակերպված դասընթացներին ուսանող-փորձագետների համար։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

04.12.24 թ. – 06.12.24 թ.

N.	04.12.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	10:30	11:20	50 րոպե
2.	Հանդիպում տնօրենի տեղակալների հետ	11:30	12:30	60 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	12:40	13:50	70 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:00	15:00	60 րոպե
5.	Դասալսումներ	15:10	15:50	40 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների (10-12 ներկայացուցիչ) հետ	16:00	16:50	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	17:00	17:50	50 րոպե
8.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	18:00	18:50	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:50	19:30	40 րոպե

N.	05.12.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում բաժնի վարիչների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ	11:50	12:40	50 րոպե
4.	Հանդիպում «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	12:50	13:40	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:50	14:50	60 րոպե
6.	Հանդիպում «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի հետ	15:00	15:50	50 րոպե
7.	Հանդիպում «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության կրթական ծրագրերի դասախոսների հետ	16:00	16:50	50 րոպե
8.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Կարիերայի կենտրոն, Գրադարանավար, Հաշվապահ, Կադրերի բաժին, Հոգեբան, Բուժկետ, Պրակտիկայի վարիչ) ղեկավարների հետ	17:00	18:00	60 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:10	19:00	50 րոպե

N.	06.12.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	10:20	11:00	40 րոպե
3.	Հանդիպում Որակի ապահովման բաժնի պատասխանատուի հետ	11:10	12:10	60 րոպե
4.	Բաց հանդիպում	12:20	13:00	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե

6.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:20	15:00	40 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:10	17:00	110 րոպե
8.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:10	17:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ստորաբաժանումների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	1
2.	Պաշտոնների անձնագրեր	2
3.	Պետական ամփոփիչ ատեստավորման քննության հաշվետվություններ	3
4.	Դասախոսների ուսումնառության պլաններ	3
5.	Պրակտիկայի օրագրեր	3
6.	Փոխադարձ դասալսումների արձանագրություններ	3
7.	ՈՒԽ աշխատանքային պլան	4
8.	ՈՒԽ նիստերի արձանագրություններ	4
9.	Դասալսումների մատյան	5
10.	Վերջին 5 տարիների ֆինանսական հաշվետվություններ	7
11.	Տնօրենի տարեկան հաշվետվություն	8
12.	Հարցումների վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

5. Լսարաններ
6. Համակարգչային սրահ
7. Ճաշարան
8. Մարզադահլիճներ (հունահռոմեական , ձյուդո, սամբո, բոցքամարտ, ծանրամարտ)
9. Հանդերձարաններ
10. Գրադարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԳՕՀՊՄՔ Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ
2. ՄԿՈՒԶԱԿ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային
3. կենտրոն
4. ՄՈՒՀ Մասնագիտական ուսումնական հաստատություն
5. ՄԿԾ Մասնագիտական կրթական ծրագիր
6. ՈԱԱԿ Որակի ապահովման ազգային կենտրոն
7. ՌԾ Ռազմավարական ծրագիր
8. ՈԱ Որակի ապահովում
9. ՈԱՇ Որակավորումների ազգային շրջանակ
10. ՊԿՉ Պետական կրթական չափորոշիչ
11. ՀՖԿՍՊԻ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
12. ԿԳՄՄՆ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
13. ԳԱՑ Գնահատման առանցքային ցուցանիշներ
14. ԿԽ Կառավարման խորհուրդ
15. ՈՒԽ Ուսանողական խորհուրդ